№ 118 ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 31

1908

ՇԱԲԱԹ ՄԱՅԻՍԻ 31 № 118

ԵՐԵՍՈՒՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրութեան մէջ.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ“ Базарная ул. д. Тамамшева № 16.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կօպէկ
Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

(36-րդ ՏԱՐԻ)

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Հասցէն՝
ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ».
TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՅ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲԼԻ

Ամսական ՄԷԿ րուբլի

Ամերիկա տարեկան . 6 դոլլար
Եւրոպա » . . 30 ֆրանկ
Պարսկաստան » . 10 րուբլի

Նիկողայոս, Միքայէլ, Բագրատ Միրիմանեանները և Սօֆիա Մատինեանը խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց մօր՝

ՆԱՏԱԼԻԱ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

մահվան մասին։ Հոգեհանգիստը շաբաթ, մայիսի 31-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Մարմնի յուղարկաւորութիւնը կիրակի, յունիսի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից (Крузенштернская, 7) դէպի Ջգրաշէնի եկեղեցին. Թաղումը Խօջիվանքի գերեզմանատան։ 1—1

ՅՈՒՆԻՍԻ 1-ԻՑ

Կարսի երկաթուղու գծի վրա, Համամլի գիւղում

ԲԱՑՎՈՒՄ Է

❋ **ԱՄԱՌԱՅԻՆ ՁՐԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ** ❋

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹԵԱՆ ԵՒ ՋՈՒԼՀԱԿՈՒԹԵԱՆ

Ընդունվում են երկու սեռի անձեր առանց պարտադիր կրթական ցենզի։ Նախնական տեղեկութիւններ կարելի է ստանալ Թիֆլիսում՝ Ա. Քալանթարից (Գրիբոյեդովսկայա № 5), իսկ Համամլիում՝ ինստրուկտոր Մ. Սողոմոնեանից։ Աշակերտների համար կը հոգացվի հանրակացարան գիւղում և ըստ հնարաւորութեան էժանագին ճաշ։ 3—2

Բագուի Հայոց Կուլտուրական Միութեան բժշկական սեկցիան

Հրաւիրում է Վարանդայի համար (Շուշու գաւառ)

ԲԺԻՇԿ,

որ մասնագէտ ՎԻՐԱԲՈՅԺ լինի։ Տարեկան 2400 ր. ռոճիկ, պատրաստ բնակարան, վառելիք և լուսաւորութիւն։ Դիմել՝ Բագու, Միութեան գրասենեակը, Красноводская ул., д. И. Д. Адамова.

(շ. չ.) առ. 2—1

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ

Շարունակութիւնը կայանալու է կիրակի, յունիսի 1-ին, առաւօտեան ժամը 10-ին, Գայեանեան դպրոցի դահլիճում, (улица Петра Великаго, д. № 13), ուստի բոլոր պատուիրակները և գաւառական ներկայացուցիչները հրաւիրվում են ներկայ լինել։

(շ. կ.) առ. 2—1

ՄԱՆԿԱԲԱՐՁՈՒՀԻ

Ս. Ջ. ԽԻՋԱՆԵԱՆ

Յունիսի 15-ից կամ 20-ից տեղափոխվում է Կօջօր։ Այնտեղ օգնութիւն կը հասցնէ հիւանդներին, յղիներին և ծննդկաններին։ Ցանկացողներին խնդրում են դիմել ըստ կարելոյն օր առաջ, Վելիամինովսկայա 14, Զուբալովի ամարանոց։

(շ. ե.) առ. 2—1

Շաբաթ, մայիսի 31-ին, երեկ. ժամը 7-ին

Թիֆլիսի բօրսայի դահլիճում

նշանակված է

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Արտակարգ ընդհանուր ժողով

Զբաղմունքի առարկաներ.

1) Զեկուցում վարչութեան ընկերութեան գործունէութեան 1907/8 սեզօնում.
2) Քննութիւն նախահաշւի 1908/9 սեզօնի.
3) Ընտրութիւններ. Վարչութեան մի անդամի, երեք փոխ. անդամի և մրցանակաբաշխութեան յանձնաժողովի անդամների։

(ու. շ.) առ. 2—2

ՀՐԱՒԷՐ

Տափի-Թաղի (Քամոյեան) ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձութիւնը պատիւ ունի հրաւիրելու մեծարգոյ ծխականներին տարեկան ընդհանուր ժողովի, որը նշանակված է յունիսի 1-ին, կիրակի, առաւօտեան ժամը 11-ին ս. Նշանի դպրոցում։

Ընդհանուր ժողովի զբաղմունքներն են՝

1. Եկեղեցու 1907 թ. գործունէութեան հաշւետւութիւնը, վերստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ միասին։
2. 1907 թ. հաշւի և ներկայ 1908 թ. նախահաշւի քննութիւնը և հաստատութիւնը։
3. Պաշտօնեաների գործավարութեան առիթով տեղի ունեցած թիւրիմացութիւնները պարզելը։

Այս ժողովը համարվում է երկրորդ և բնական՝ չը նայելով ներկայ գտնվող անդամների թւին։

(շ.) ա. 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ

Ալէքսանդր Նիկիտիչ

ՕՐԴՈՒԽԱՆՈՎ

Մասնագէտ ներքին հիւանդութիւնների։ Ընդունում է Կովկասի հանքային Ջրերում։

Հասցէն՝ Эссентуки, Кисловодская ул. домъ Семенковыхъ.

(շ. ե.) առ. 5—3

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Խմբագրութիւնը յայտնում է բոլոր այն բաժանորդներին, որոնք դիմում են՝ հասցէն փոխել տալու համար մի քաղաքից մի այլ քաղաք, ուղարկել 40 կօպէկ՝ կամ պօստային մարկաներով կամ դրամով։

ՎԵՐԱԿԱԶԴՈՒՐՄԱՆ ՀԱՐՑԸ

I

Կողոպուտ, թալան, սպանութիւն, առևանգութիւն, իսկ նուազագոյն դէպքերում սպառնալիքներ, դաւադրութիւններ և ոտնձգութիւններ խեղդել են մեր կեանքի մթնոլորտը և անդամալուծել կուլտուրական գործողների հանրային գործունէութիւնը։

Այդ արատները կամ յանցանքները մի որոշ աստիճան գոյութիւն ունեցել են և առաջ, գոյութիւն ունեն և ուրիշ երկիրներում. բայց այն քանակով և այն բնաւորութեամբ, որ այժմ ենք մենք տեսնում մեր իրականութեան մէջ, նրանք այդքան երկարատև կերպով չեն կաշկանդել և կանգնեցրել հասարակական և առանձին կեանքը։

Խեղդուկ է կեանքի մթնոլորտը։

Մարդիկ տանջուել, տառապել և յուսահատուել են այն անվերջ հարուածներից, որոնց նրանք շարունակում են ենթակայ լինել ներկայ անցողական շրջանում։

— Փոքր ինչ էլ սպասենք,— ասում են ամենքը,— փոքր ինչ էլ համբերենք և կեանքը կը մտնի իր կանոնաւոր զարգացման շաւղի մէջ։

Այդպէս ասում և մտածում են ամենքը։ Եւ սակայն՝ իրականութիւնը չէ բարւոքվում։ Նա շարունակում է բացասական և խաւար երևոյթներով թունաւորել մարդկանց կեանքը և աղաւաղել նրա արտայայտութիւնները։

Մենք լաւ գիտենք, որ յեղափոխական ցնցումների ժամանակ տեղի են ունենում անսովոր դէպքեր և յանցանքներ խաղաղ կուլտուրական կեանքի դէմ։ Բայց այդ ցնցումներն անցնելուց յետոյ կուլտուրական կեանքը նորից մտնում է իր ընթացքի մէջ և աշխատում է վերակազդուրել երկիրը և ժողովուրդը նրանց ստացած վնասներից և վէրքերից։

Այո, վերակազդուրման խնդիրը ամենախոշոր և էական խնդիրն է, որը պէտք է ամենայուրջ ուշադրութեան և հոգատարութեան առարկայ լինէր մեր հասարակութեան համար, եթէ մենք չենք կամենում այնպիսի սոսկալի աղէտների մատնել մեզ, որոնց կործանարար և թունաւոր ազդեցութիւնից չը կարողանանք յետագայում այլ ևս փրկել և ապահովել մեզ։

Ներկայի տարտամ վիճակից հիւծվում է կուլտուրական կեանքը, տանջվում տառապում է ժողովուրդը, լքվում են ինտելիգենտ խաւերը։

Հակակուլտուրական, հակաբարոյական մակաբոյծ տարրերի շնորհիւ ընդարմացել են հասարակութեան այն ոյժերը, որոնք կեանքի սովորական կանոնաւոր ընթացքի ժամանակ նրան աշխոյժ էին տալիս և հարթում առաջադիմութեան ուղին։

Մինչև հասարակութիւնը ինքնուրոյն և գործունեայ կերպով ձեռք չի մեկնի իր կեանքի ղեկավարութեան և բարւոքման, մինչև որ նա հանդէս չի գայ իր ստեղծագործական ուժեղ գործունէութեամբ, մինչև այդ նա մատնված կը լինի կրաւորական դերի, ենթակայ կը լինի ամեն մի պատահականութեան և ստիպված կը լինի տանել այն տառապանքները, որոնք խեղդել և ճնշել են նրա գոյութիւնը։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ռեվէլ, 29 մայիսի

Կայսրի տեսակցութիւնը անգլիական թագաւորի հետ ամրապնդեց և հաստատեց այն բարեկամական յարաբերութիւնները, որ գոյութիւն ունեն երկու կառավարութիւնների միջև, որոնց հիմքը դրվեց անցեալ տարվայ համաձայնութիւններով։

Իզվօլսկու և սըր-Հարդինգի խօսակցութիւններից պարզվեց, որ այդ համաձայնութիւնները ամենաբարդաւոր ազդեցութիւնն ունեցան զանազան հարցերի խաղաղ ընթացքի վրա։ Հայեացքների լիակատար համանիշութիւնը շարունակում է գոյութիւն ունենալ Ռուսաստանի և Անգլիայի միջև՝ պարսկական և աւղանական գործերի վերաբերութեամբ։ Վերջերս — ինչպէս հնդկա-աւղանական, այնպէս և ռուս-պարսկական սահմանագլուխներում— տեղի ունեցած միջնադէպերը չեն կարող առիթ տալ և ոչ մի թիւրիմացութեան երկու կառավարութիւնների միջև։ Ինչ վերաբերում է Պարսկաստանին, երկու կառավարութիւններն էլ—ռուսական և անգլիական—առաջվայ նման հաստատապէս մտադիր են յարգել այդ երկրի ամբողջութիւնը և անկախութիւնը։ Կարելի է կարծել, որ այն բանակցութիւնները, որ արդէն վարվում են երկու կառավարութիւնների միջև մակեդօնական գործերի վերաբերեալ, համարեա հասցված են լիակատար համաձայնութեան և այժմ մնում է միայն նրան վերջնական ձև տալ։ Կարելի է յուսալ, որ այդ համաձայնութիւնը հիմք կը ծառայէ ընդհանուր համաձայնութեան այն պետութիւնների միջև, որոնք շահագրգռված են մակեդօնական բարենորոգումների գործում։

Իզվօլսկին և Հարդինգը բացի դրանից կարողացան համոզվել, որ թէ Ռուսաստանը և թէ Անգլիան ցանկանում են ամենալաւագոյն յարաբերութիւններ պահպանել միւս բոլոր մեծ պետութիւնների հետ և վերջիններին տեղիք չը տալ անհանգստանալու այն նպատակի վերաբերութեամբ, որին հետամուտ են ինչպէս երկու երկիրների միջև կապված յատուկ համաձայնութիւններով, այնպէս և նրանց հանուր քաղաքականութեամբ, որ կարող է միայն նպաստել ընդհանուր խաղաղութիւնը պահպանելուն և կռելուն։ («Հ. Գ.»)

—

Ռեվէլ, 29 մայիսի

Անգլիական էսկադրան առ. ճիշտ ժամը 4-ին խարիսխը վերցրեց։ («Հ. Գ.»)

—

Ռեվէլ, 29 մայիսի

Թագաւոր Կայսրը բարեհաճեց Սպիտակ Արծուի ս. Ալէքսանդրի շքանշան շնորհել սըր-Հարդինգին, սըր Նիկօլսօնին, գեներալ Ֆրէնչին և ծովապետ Ֆիշերին, լօրդ Համիլտօնին, կոմս Գօուին։

Ալէքսանդրա Թագուհին իր պատկերները ընծայեց մինիստրների խորհրդի նախագահ Ստոլիպինին, Իզվօլսկի և Դիկօվ մինիստրներին։ («Հ. Գ.»)

—

Ռեվէլ, 30 մայիսի

Պալատի մինիստրի հեռագրից երեւում է, որ երէկ, արշալոյսին, անգլիական թագաւորը, թագուհին և Վիկտօրիա պրինցուհին Ռեվէլի նաւահանգստից անցան «Վիկտօրիա և Ալբերտ» զբօսանաւը, շրջապատված անգլիական նաւերով։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգ, 29 մայիսի

«Ալմազ» յածանաւը մինիստրների խորհրդի նախագահի և արտաքին գործերի մինիստրի հետ ցերեկվայ ժամը 5-ին մեկնեց Պետերբուրգ։ («Հ. Գ.»)

—

Պօլսի քաղաքական շրջաններում Էդուարդ թագաւորի Ռուսաստան գնալը բացարձակ անհանգստութիւն է պատճառում։

Մինչև այժմ Թիւրքիայի կառավարող խաւերի ամբողջ քաղաքականութիւնը, ինչպէս յայտնի է, հիմնված էր անգլօ-ռուսական հակառակութեան վրա։ Այդ քաղաքականութիւնը հնարաւորութիւն էր տալիս անվերջ քաշքշել Մակեդօնիայի բարենորոգումների մասին եղած բանակցութիւնները։

Եըլդըզ-Քէօշկին չեն կարողանում հանգստացնել մինչև իսկ Վիէննայի դիպլօմատների այն հաւաստիացումները, որ Էդուարդ թագաւորի Ռեվէլ գնալը ոչ այլ ինչ է, բայց եթէ միջազգային քաղաքավարական մի ակտ։ Հետաքրքրական է համեմատել Վիէննայի լրագիրների հաղորդած այդ լուրերը այն բոլորի հետ, ինչ որ այդ առիթով գրում է Բեռլինի մամուլը, մանաւանդ գերմանական պաշտօնական թերթերը։

Բեռլինի և Պօլսի կառավարող շրջանների անհանգստութիւնը միանման է։

—

Պարիզ, 29 մայիսի

Հաւաստի տեղեկութիւնների համաձայն, Թագաւոր Կայսրի տեսակցութիւնը ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ֆալիէրի հետ տեղի ունենայ Ռեվէլում, յուլիս ամսում։ Մինչև այդ ժամանակ Ֆալիէրը կը գնայ Կօպէնհագէն, ուր կը մնայ 2—3 օր, ապա կուղևորվի Ստոկհօլմ, այդտեղից Ռեվէլ, Ռեվէլից կը գայ Խրիստիանիա՝ նրա ճանապարհորդութեան վերջնական կէտը։ («Հ. Գ.»)

—

Բելգրադ, 29 մայիսի

Վերջին օրերս մինիստրների խորհուրդը քննում էր ընտրութիւնների հետևանքից առաջացած դրութիւնը։ Լուրերին նայած, կառավարութիւնը վճռել է հրաժարական տալ։ Գալիք շաբաթ նշանակված կառավարական կուսակցութեան ժողովում կը լուծվի կաբինէտի հրաժարականի խնդիրը։ («Հ. Գ.»)

—

Պետերբուրգից մայիսի 28-ին հեռագրում են «Каспій» լրագրին.

Գուչկովի անսպասելի խստութեամբ հանդէս գալը պետական պաշտպանութեան հարցում զանազան մեկնութիւնների տեղիք է տալիս։

„Рѣчь“ լրագիրը կարծում է, որ Գուչկովը սահմանն անցաւ բաւականին, քան թէ այդ հարկաւոր էր հոկտեմբերեաններին։

Չելնոկովը մասնաւոր խօսակցութեան միջոցին ասել է. «Մենք, մոսկվացիներս, ընտելացել ենք Գուչկովի կեղծ համարձակութեան և գեղեցիկ յանդգնութեան անակնկալ արտայայտութիւններին»։

Ծովային և զինուորական մինիստրութիւնները ոչ մի գործ չունեն «ազատութիւնների» հետ, և այդտեղ ահա կարելի է ազատամտութիւն անել՝ հռչակվելու համար։ Ինքը Գուչկովը յայտնել է, որ հրդեհի ճարակ դարձրեց իր բոլոր նաւերը։ Նա կարծում է, որ Ստոլիպինին նրա հանդէս գալը անհաճելի էր, բայց և սերվիլիզմը աւելի վտանգաւոր է համարում քան թէ ռիսկը։

—

Բանտային գլխաւոր վարչութիւնը կարգադրել է «վըբօրգցիների» վերաբերմամբ ճշտիւ կատարել բանտային կանոնները։ Քաղաքական գործի տակ ընկածներին արգելվում են ընդհանուր զբօսանքները։

—

Դադարեցված „Руль“ լրագիրը ապրիլ ամսի իր համարներից մէկում գիւղացիական բանկի մասին յօդուած զետեղելու համար Մոսկվայի քաղաքապետի կողմից ենթարկված է 500 րուբլի տուգանքի։

—

Թիֆլիս, 29 մայիսի

Թիֆլիսի պարսից գեներալ-հիւպատոսից ընդունվեց այն 50,000 րուբլին, որ փոխադրված է նրան Թաւրիզից հատուցանելու ռուսներին Բէլօսուարի դէպքերից առաջացած վնասների համար։ Վերոյիշեալ գումարից 30,000 րուբլին տրվելու է սպանված ռոտմիստր Դվօէգլազովի և զինուորների ընտանիքներին։ («Հ. Գ.»)

—

Ղօչան, 23 մայիսի

«Մշակի» նախընթաց համարներում գրել էինք թէ ինչ փոփոխութեան ենթարկվեց անջումանը, տեղիս նախկին դատաւոր Սուդջա-Դօվլէի ժամանելուց յետոյ։

Կանխապէս քաջ ծանօթ լինելով տեղիս անջումանականներին՝ նախկին բռնակալի անցեալներում ժողովրդին գործ դրած բարբարոսութիւններին, հէնց ժամանած օրից երկիւղ պատեց և անջումանն ընկաւ իր կոչման բարձրութիւնից։

Առայժմ առերես լաւ է անջումանի և Սուդջա-Դօվլէի յարաբերութիւնները, բայց խուլ յուզումները շարունակվում են։

Երեք տարի անընդհատ արիւն քամող պայքարով ձեռք բերված սահմանադրութիւնը հեզահետէ կուլ է գնում նոր գլուխ բարձրացրած ըէակցիային։

Աչքի առաջ ունենալով անջումանի քայքայված դրութիւնը, յուրեր են պտտում, որ ժողովուրդը պահանջում է անջումանի պատգամաւորներին հեռացնելու և նորերին ընտրելու։

Ընթերցողի համար հետաքրքրական է, թէ ինչ ձևով են պատգամաւորական ընտրութիւններ կատարւում այստեղ. արժէ այդ մասին առանձին խօսել։

Մկր. Գէորգեան

—

Բեռլինից մեզ գրում են մայիսի 22-ից.

«Պարսից շահը, իր գոհունակութիւնը յայտնելու համար առ Յովհաննէս-խան Մասեհեանը, որ այժմ Բեռլինի պարսից լիազօր դեսպանն պաշտօնակատարն է, ուղարկել է նրան մի հրովարտակ, որով շնորհում է նրան Շիր-Խուրշուդի շքանշանի առաջին աստիճանը, կանաչ հաժայիլով (ժապաւէնով), որ մինիստրներին է յատկացված։ Միևնոյն հրովարտակով շահը տալիս է Մասեհեանին Մուսաեդ-իւլ-Սալթանէ (աջակից պետութեան) տիտղոսը, փոխարէն նրա նախկին Էմեդ-իւլ-վզարէ (օգնական վէզիրների) տիտղոսի»։

Շնորհաւորում ենք Մասեհեանի պետական ծառայութեան այս նոր գնահատութիւնը։

—

Թէհրանից «Каспій» լրագիրը ստացել է հետևեալ թղթակցութիւնը.

Բոլոր զինուորական հրամանատարները (սարդարները), արտիլլերիայի և արսենալի օֆիցերները, արքայազունների մեծ մասը, Թէհրանի նահանգապետ վեզիր Ակրամը, ոստիկանութեան, պօստ-հեռագրատան, միւս բոլոր մինիստրութիւնների և «բուզուրգաննիրի» (բարձրաստիճան անձինք) պաշտօնեաները մայիսի 17 ին բաստ են նստել ղաջարների ցեղի ամենամեծ արքայազն Ազադ-էլ-Միւլքի տանը։ Գործադուլարարները պահանջում են վերջնականապէս հեռացնել շահի մօտից Էմիր-Բահադուրին, ռուսահպատակ Շապշալին, Մօջալլին, որի դրդմամբ սպանվեց գեբր՝ սահմանադրական Ֆերէյդունը և մի քանի ուրիշ անձինք, որոնք իբր թէ շահին շեղում են իսկական ճանապարհից, յայտնում են նրան հնարովի բաներ և, վախեցնելով նրան, թոյլ չեն տալիս անցնել ժողովրդի և նոր րէժիմի կողմը, ու այդպիսով երկիրը իրանց ոտնձգութիւններով հասցնում են գրաւման։ Այդ պահանջներին բաւարարութիւն տալու մերժումի դէպքում, սպառնում են վերոյիշեալ անձանց հետ վարվել այնպէս, ինչպէս իրանք են կամենում։

Մայիսի 18-ին Ազադ էլ-Միւլքի մօտ սկսվեցին հաւաքվել բոլոր անջումանների ներկայացուցիչները, մէջլիսի պատգամաւորութիւնը և սահմանադրութեան կողմնակից մուշտէիդները։

Նրանք ժողովրդի անունից շնորհաւորեցին գործադուլարարներին իրանց զգացմունքները փոխելու համար և յոյս յայտնեցին, որ այս անգամ նրանց յարելը ժողովրդին ու սահմանադրութեան կը լինի անկեղծ։ Ժողովրդական ճառախօս Մօլէկ-էլ-Մուտակօլեմինը մի զգացված հայրենասիրական ճառ արտասանեց և վերջացրեց մօտաւորապէս հետևեալ խօսքերով. «Ի նկատի ունեցէք, որ ժողովուրդը վերջնականապէս բաց է արել իր աչքերը և խիստ լրջութեամբ հետևում է ձեր քայլերին։

«Եթէ այժմ էլ դուք կը փորձէք կեղծել ձեր հոգին և մատնել մեր թանգագին հայրենիքը թշնամուն, այն ժամանակ ժողովուրդը հէնց առաջին քայլափոխում կը պատժի. դրա համար նա բաւականաչափ ոյժ կունենայ, իսկ այնուհետև ինչ որ Աստուած կը տնօրինէ»։

Մայիսի 19 ին շահին ներկայացաւ իբրև միջնորդ Ազադ-էլ-Միւլքը, բայց ոչ մի աջողութիւն չունեցաւ։

Մայիսի 20-ին խլրտումները սաստկացան. գործադուլ արեցին պետական բոլոր հաստատութիւնները, դպրոցները, հետզհետէ սկսեցին փակել նաև շուկաները։ Ազգաբնակութեան բոլոր խաւերից, մինչև իսկ երեխաներից, պատգամաւորութիւններ եկան շնորհաւորելու գործադուլարարներին, որոնց շնորհաւորում էին ուղերձներ և ոտանաւորներ կարդալով։

Երկիւղ էին կրում խոշոր անկարգութիւններից և մինչև իսկ կասկածում էին, որ մի գուցէ յարձակում գործեն պալատի վրա, որի պահպանութեան համար ներսից և դրսից նշանակված էին Էմիր-Բահադուրի 1000 ձիաւորները և 1000 հետևակ զինուորները։ Սիլախուրի գնդի զինուորները, որոնք մինչև այժմ համարվում էին բռնակալութեան պաշտպաններ, նոյնպէս անցան սահմանադրութեան կողմը։ Նրանց բատալիօնը, որ բաղկացած է 800 հոգուց, մայիսի 20-ին ուղարկում է իր օֆիցերներին գործադուլարարների մօտ՝ յայտնելու նրանց, որ իրանք ամբողջովին սահմանադրութեան կողմն են և, առաջին իսկ հրաման համաձայն, կը թողնեն իրանց պահակատեղերը և կը հեռանան պալատի մօտից։ Ազգաբնակութիւնը սկսեց զինվել։

Մայիսի 20-ին շահին ներկայացան նոր միջնորդներ Նաիր-էդ-Դովլէն, նոր նշանակված ներքին գործերի մինիստրը և նախագահ Մուշիր Սալթանէն և Ազադ-էլ-Միւլքը։ Երեք օր պայքարից յետոյ, շահը զիջեց գործադուլարարների, բոլոր անջումանների, մէջլիսի և ամբողջ ազգաբնակութեան արած միահամուռ պահանջներին։

Նոյն օրը երեկոյեան (մայիսի 20-ին) պալատից հեռացվեցին ռէակցիայի պարագլուխ Էմիր-Բահադուրը, Մօվաքար-էս-Սալթանէն, Համիդ-էլ-Միւլքը, Մուֆար-էլ-Միւլքը, մի ինչ որ Ալիբեգ, որ Շապշալի մտերիմն է, և ռուսահպատակ Շապշալը։ Առաջին 5 հոգին պէտք է հեռանան մայրաքաղաքից, իսկ վերջինս՝ Շապշալը Պարսկաստանի սահմաններից։

Մայիսի 21-ի գիշերը Էմիր-Բահադուր-Ջօնգը, ինչպէս հաղորդում են, հեռացել է քաղաքից և մտել ռուսական միսսայի հովանաւորութեան տակ, որ գտնվում է քաղաքից 12 վերստ հեռաւորութեան վրա Զերգենդ ամարանոցում։

—

Կուշկա, 24 մայիսի

Անգլօ-աւղանական միջադէպից օգտվելով՝ Աւղանստանի մայրաքաղաք Քաբուլից փախել այստեղ են եկել 13 հոգի, որոնք պատկանում են ջամշտի ցեղին, որի գլխաւոր ու ազդեցիկ ցեղապետն էր Աղախանը, որը սրանից 24 տարի առաջ, իր ամբողջ տոհմով գերի տարվելով աւղանների կողմից, գլխատվեց Քաբուլում։ Այդ տոհմի աւղանների կողմից մեղադրվում էր այն բանում, որ իբր թէ նրա պետ Աղախանը սրանից 24 տարի առաջ Տաշ-Կիպրի աւանում աւղանների սարքած ցոյցին դիմադրել է յօգուտ ռուսների։ Այդ ցոյցը, որ աւղանները սարքել էին ռուսների դէմ, իբրև հետևանք առաջացրեց այն, որ ռուսները առաջացան մինչև Կուշկա։ Աւղաններն այն ժամանակ իրանց տարած գերիների գլխաւորներին, որոնց թւում և Աղախանին, գլխատեցին, խնայելով մանուկներին։ Այժմեան փախստականներն հէնց այդ Աղա-խանի տոհմի ներկայ սերունդն են։ Նրանք զինված են հիանալի կերպով, անգլիական լաւագոյն զէնքերով, և ունեն հրաշալի արագավազ ձիեր, այնպէս որ 28 օրվայ ճանապարհը կտրել-անցել են 9 օրում։

Իմ հարցին, թէ ինչպէս կարողացան այդքան տեղն այդպիսի կարճ ժամանակում կտրել, այն էլ ամբողջ տոհմով,—փախստականների ներկայացուցիչներից մինը պատասխանեց, թէ իրանք նախ ցոյց են տուել, թէ կամենում են անգլօ աւղանական միջադէպին մասնակցել յօգուտ աւղանների և, Նասրուլլա-խանի հրամանատարութեամբ, լաւ զինված, դուրս են եկել Քաբուլից՝ դիմելու դէպքի վայրը։ Ապա, մայրաքաղաքից դուրս գալուց յետոյ, իրանց ձիերն աննկատելի կերպով քշել են դէպի ռուսական սահմանագլուխը և այդպիսով ազատվել ստոյգ մահից, որ սպասում էր իրանց անգլիական զօրքերի դէմ գնալիս։

Փախստականները յայտնեցին, թէ իրանք պատշաճաւոր վարչութեանն են դիմելու, որպէսզի կարողանան ռուսահպատակութիւն ընդունել և բնակվել Կուշկայի շրջակայքում, քանի որ այս վայրն իրանց նախկին հայրենիքն է։

Բանուոր

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Փամբակ, 26 մայիսի

Աննկարագրելի է ներկայումս Փամբակի քարահանքի բանուորների վիճակը։ Անտանելի են նրանց շահագործող կապալառուի ստեղծած աշխատանքի դժոխային պայմանները։ Բանուորական նախկին ուժեղ կազմակերպված արտելի միայն խղճալի կմախքն է մնացել։ Այսօր էլ արտելը անուանական կերպով գոյութիւն ունի։ Բայց որքան թոյլ, որքան կերպարանափոխված։ Կապալառուն, տեսնելով որ ինքը կազմակերպված արտելի դէմ չէ կարող ոտնձգութիւններ անել, ստիպված եղաւ թուլացնել նրա դիմադրական ոյժը, իջեցնելով կուբիկների գինը, և այդպիսով անգործութեան մատնեց 100 բանուորների, որոնք աւելի լաւ համարեցին սովամահ լինել, քան այդ պայմանով իրանց կեանքը խոնաւ քարահանքում մաշել։ Բայց եղան այնպիսի բանուորներ, որոնք ստիպված եղան անձնատուր լինել կապալառուին։ Դրանց կրկին այդ դժոխքը նետողը եղան իրանց ընտանիքի թշուառ դրութիւնը և երկրորդ վաշխառուի մուրհակները։ Նրանք այժմ իւրաքանչիւր կուբիկ պատրաստում են 6½ կ. և նախնական ամբողջ ծախսը իրանց վրա։ Բանուորները վաղ առաւօտից մինչև երեկոյ առանց հանգստանալու պէտք է աշխատեն, կաշուից դուրս գան, որպէսզի կարող լինեն պատրաստել 10 կուբիկ, որը կարժենայ 60—70 կ.։ Իսկ եթէ այդ չնչին վարձից հանենք մի քանի անհրաժեշտ ծախսեր, այն ժամանակ խեղճ բանուորի ընտանիքին հազիւ մի կտոր չոր հացի գին մնայ։

Անցնում են ամիսներ ամիսների ետևից, բանուորը անդադար ծանր մուրճով կռիւ է մղում ապառաժների հետ, լուռ համբերութեամբ տանում է բնութեան բոլոր արհաւիրքները այն յուսով, որ գոնէ իր աշխատանքի ողորմելի սև կոպէկները ժամանակին կը ստանայ կապալառուից և կազատվի իր պարտքերից և մնացածն էլ կուղարկի իր հեռաւոր ընտանիքին։ Բայց ահա իններորդ ամիսն է, որ կապալառուն կարծես երես է դարձրել բանուորներից, չէ այցելում քարահանքը և չէ վճարում բանուորների վարձը։ Նրանք շարունակ պատգամաւորներ են ուղարկում կապալառուի մօտ, բայց խորամանկ կապալառուն պատգամաւորներին կամ զուր խոստումներով վերադարձնում է դատարկաձեռն, կամ նոյնիսկ նրանց կաշառելով իր կողմն է գրաւում։ Եւ այդպէս՝ բանուորները «դատն դատում են—մահրում մնում»։

Ո՞ւմ դիմեն և բողոքեն բանուորները։ Ի՞նչպէս ապրեն։ Պէտք է որ քաղաքային դուման ուշադրութիւն դարձնի և ծանօթանայ, թէ ինչ է կատարվում «Փամբակ» քարահանքում։ Չէ՞ որ սրանից 2—3 տարի առաջ դուման իր ներկայացուցչի միջոցով խոստացաւ քարահանքը յանձնել բանուորական արտելին և նոյնիսկ նա բանուորների համաձայնութեամբ կազմեց արտելի ծրագիրը և խոստացաւ ներկայացնել նահանգապետին հաստատելու համար։ Ինչո՞ւ դուման չը կատարեց իր խոստումը։

Վերջապէս ժամանակ է, որ քաղ. դուման ազատի անճար բանուորներին հրէշ շահագործողների կամայականութիւններից, այլապէս, եթէ այսպէս շարունակվի, բանուորները չափազանց թշուառ դրութեան մէջ կընկնեն։

Գիւղական ուսուցիչ

—

Սև-Քար (Ղազախի գաւ.), 24 մայիսի

Սովի ճգնաժամը պաշարել և քամում էր սովալլուկ շինականներին. բազմաթիւ դիմումներից ու աշխատանքներից յետոյ աջողվում է կառավարութիւնից նպաստ ստանալ՝ բաժանելու այն ընտանիքներին, որոնք ուժասպառ էին եղել դաժան կարիքի առաջ։ Սակայն «վաքիլութեան» պաշտօնին արժանացած գառնազգեստ գայլերը, շատ անգամների պէս, ուզում էին նորից մի ստոր խաղ խաղալ թշուառ ու անգիտակից մասսայի գլխին։

Բագուաբնակ սև-քարեցի երիտասարդական-հայրենակցական միութիւնը, ի նկատի ունենալով կատարված կեղեքումներն ու իրերի խառնաշփոթ դրութիւնը, իր միջից ընտրել և գիւղն է ուղարկել պ. պ. Յովհաննէս Ամիրեանին, Մարգար Յովսէփեանին և Կիրակոս Խառատեանին, որոնք ստանալով նաև ամբողջ հասարակութեան վստահութիւնը՝ եռանդուն ջանքերով քննում և կարգաւորում են բոլոր ընդհանուր բնոյթ ունեցող հաշիւները։

Ինչպէս երևաց փաստացի տեղեկութիւններից, պ. պ. վաքիլները ոչ թէ նպատակ են ունեցել ճշմարտութեամբ տանելու իրանց վրա դրված մեծ պարտականութիւնը, այլ աշխատել են հնարաւոր եղածին չափ շահագործել ժողովրդի վստահութիւնը, առիւծի բաժինը վերցնել իրանց և բարեկամների համար, իսկ վերջին ծայր աղքատութեան մէջ գտնվածներին անուշադրութեան մատնել։ Որպէսզի պ. պ. վաքիլները առիթ չունենան խօսելու, յիշատակենք, որ չը նայած հէնց իրանք Սիմէօն Քոչարեանն ու Յարութիւն Ղալումեանը, ինչպէս նաև Առաքել Ոլխանեանը, Վարթեան Բաղինեանը, Միխակ Ղալումեանն ու այսպէս շատ շատերը լաւ ու բարեկեցիկ դրութեան մէջ են գտնվում, այնուամենայնիւ առանց ամաչելու խլել են Ալիբէկեան Առաքելի, Բաղդասարեան Վարթեանի, Օհան Խառատեանի և այսպէս բազմաթիւ աղքատների բաժինները—ապրուստի միակ միջոցները։ Բացի այս անարդարութիւնից տեղի է ունեցել մի վերին աստիճանի ցած ու յանդուգն արարմունք։ «Գառների պահապան կարգված այդ անկուշտ գայլերը» գիւղացիներին բաժանվելիք ցորենից ու կորեկից մինչև իսկ պուդերով տակովն են անում։ Մեծ կը լինի ընթերցողի զարմանքը, եթէ ասեմ, որ պ. Քոչարեանը 30 պուդից անկուշտ յագուրդով լափել է ամբողջ 7 պուդ կորեկը։ Նրա հաշւով Վարթեան Ալիբէկեանը ստացել է 2 պ. 20 ֆ., Գաբրիէլեան Մադոյի կինը 3 պ. 5 ֆ., Մարգարեան Արզումանի կինը 3 պ. 5 ֆ. և այլն. այն ինչ, կօմիսիայի փաստացի ցուցմունքներից երևում է, որ առաջինն ստացել է 1 պ., այսինքն 1 պ. և 20 ֆ. պակաս, երկրորդը՝ 2 պ., 1 պ. 5 ֆ. պակաս, երրորդը՝ 1 պ. 35 ֆ., ուրեմն 1 պ. և 10 ֆ. պակաս։

Գ. Հայկունի

—

Բագարան գիւղ, 20 մայիսի

Մայիսի 16-ին, երեկոյեան դէմ, երբ Առիւծ-Աւագ Մրենի քարանձաւների միջից Ախուրեանի ձախ ափով գնում էր Բագարան՝ իր որդիքը նոյն գիւղի ծխական դպրոցում տեսնելու, 30-ի չափ զինված աւազակներ դարան մտած յանկարծ գնդակներ են արձակում Առիւծ-Աւագի և իր երկու անմեղ ընկերների վրա, որոնք անմիջապէս ընկնում են։ Աւազակները տանում են այս երեք ընկերներից 190 րուբլի կանխիկ փող, նրանց զէնքերը և կտրելով Առիւծ-Աւագի մատը, հետը տանում են ոսկի մատանին։ Առիւծ-Աւագի վրա կային 45 գնդակի հետքեր, նոյնպէս և միւս երկու ընկերների։

Առիւծ-Աւագ որը թողեց իր երեք մատղահաս զաւակներին, որոնք երկրից անցեալ տարի եկան, ուրախացան, որ իրանց հայրը Թիւրքիայից առանց սպանվելու ազատվեց և իրանք որբ չը մնացին. սակայն այստեղ Կարմիր-Սուլթանից աւելի անխիղճ մարդիկ կային, որոնք աչքի առաջ երբէք չունեցան նրա անցեալը, որ Սերոբ փաշայի միակ սիրելին էր և նրա կռւող ոյժը, ուստի առանց խնայելու սպանեցին. այժմ մնում են անտուն, անտեղ, անպաշտպան նրա երեխաները, ուստի յայտնում եմ ի գիտութիւն Բագուի և բոլոր այն հասարակութեան, որոնք ծանօթ են նրա՝ Բագուի հայ-թուրքական ընդհարման ժամանակ յայտնագործած քաջութեան, իրանց անմիջական օգնութիւնը չը խնայեն նրա որբացած զաւակներին։ Տուած նուէրները կարող են ուղարկել «Մշակի» խմբագրութեան, որ կուղարկէ Առիւծ-Աւագի հէգ որբերին։ Պէտք է օգնեն և բոլոր հայրենակիցները։ Արտաշէս Մահ.-Յակոբեան

ԹՈՒՐՔԱՀԱՅ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ

—

Ստացել ենք 1) Գումբէթ-Հավուզից (Չիքիշլեար), Գէորգ Կարապետեանից 10 րուբլի, հանգանակված տեղական հայերի և թիւրքմէնների մէջ. 2) Մերվից, մի ոմնից—3 ր., 3) Հին Նախիջևանից, Ստեփան Ն. Մասումեանից նորերս վախճանված Ալէքսանդր Սարգսեանցի դագաղի վրա պսակ դնելու փոխարէն—5 ր., 4) Կիևից, Խորէն Ք. Մնացականեանից իր՝ Կատարինէ քրոջ դագաղի վրա պսակ դնելու փոխարէն—10 ր., 5) Պետերբուրգից, Յովսէփ Ներսիսեանից—15 ր., 6) Կուշկայից, Միքայէլ Բարաթեանից, հանգանակված տեղական հայ գաղութի մէջ—15 ր. (նուիրել են—Ջ. Առաքելեան՝ 5 ր., Ի. Տէր-Յակոբեան՝ 3 ր., Մ. Գասպարեան՝ 3 ր., Պ. Քոչարեան՝ 1 ր., Բրատին (հրեայ) 1 ր., Մ. Բարաթեան՝ 1 ր., Աւշար Իշխանեան՝ 1 ր., 7) Քերչից, անյայտից—5 ր., 8) Աուլիզաս քաղաքից (Սիր-Դարիայի շրջան), Մկրտիչ Յովհաննիսեանից, հանգանակված—19 ր. (նուիրել են—Օհաննէսեանց՝ 10 ր., Զաւնշիրեանց՝ 5 ր., «Արցախ» մագազին՝ 3 ր., Սարգսեանց՝ 1 ր.)։

ՍՏԱՑՎԱԾ ԱՅԼ ԳՈՒՄԱՐՆԵՐ

—

1) Բագուից, դերասան Աւետ Հասան Ջալալեանից, մի ներկայացման զուտ արդիւնքի 25 %-ը յօգուտ Դրամատիկական ընկերութեան ֆօնդի—12 ր. 50 կ., 2) Քերչից, Խ. Գ. Յովհաննիսեանից, Ղափանի Խդրանց գիւղում շտեմարան հիմնելու համար, յանձնելի բարեգործական ընկերութեան—100 ր. (առաջվայ ստացածի հետ միասին ունենք այդ նպատակով 300 ր.), 3) Պետերբուրգից, Յովսէփ Ներսիսեանից, յօգուտ սպանված Մկրտիչ Ռօյեանցի (տես «Մշակ» № 97) ընտանիքի—10 ր. (ուղարկեցինք Էջմիածին՝ Յուսիկ վարդապետին՝ յանձնելու)։

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ՇՈՒՐՋԸ

—

◆ Պատգամաւորների մէջ խօսում են, որ գեներալ Դումբաձէի բացատրութիւնը ուղարկված է եղել ոչ թէ Պետական Դումայի համար, այլ միայն ներքին գործերի մինիստրութեան, որ կառավարչական շրջաններում շատ դժգոհ են այն հանգամանքից, որ այդ գրութիւնը մտել է Դումա և, ի հարկէ, Դումայի միջոցով էլ անցել է մամուլի մէջ։ Քննութիւն է սկսված պարզելու թէ ինչ ձևով այդ գրութիւնը անցել է ներքին գործերի մինիստրութեան շրջանակներից դուրս։ («Р. Утро»)

◆ Հարցապնդումների մասնաժողովը ներկայացրել է Պետական Դումայի ընդհանուր ժողովին իր զեկուցումը Կովկասում կատարվող տերրորների մասին հարցապնդում անելու առիթով։ Հարցապնդումը վերջնականապէս խմբագրված է հետևեալ ձևով. 1) Յայտնի՞ է Փոխարքային, որ Կովկասում անտանելի դրութիւն է ստեղծվել խաղաղ քաղաքացիների համար, որոնք ահաբեկված են տեղական յեղափոխական տարրերի կողմից։ Եւ, եթէ յայտնի է, ինչ միջոցներ են ձեռք առնված կամ ձեռք են առնվելու խաղաղ ռուս բնակիչների հանգստութիւնը յեղափոխական տարրերի չարագործութիւններից ապահովելու համար։ 2) Յայտնի՞ է Փոխարքային, որ այս հարցապնդումի մէջ յիշատակված ոճիրները տեղի են ունեցել և այդ ոճիրները սիստեմատիկ կերպով թագցվում էին։ Եթէ յայտնի է, արդ՝ ինչ միջոցներ են ձեռք առնված նրանց բռնելու համար։ 3) Փոխարքային յայտնի՞ է, որ այս հարցապնդումի մէջ յիշված բանտարկեալների փախուստները կալանաւորութեան տեղերից պատահել են։ Եթէ յայտնի է, ինչ միջոցներ են ձեռք առնված կամ ձեռք են առնվելու այլ ևս այդպիսի փախուստներ թոյլ չը տալու համար, նոյնպէս և պատասխանատուութեան ենթարկելու համար այն անձանց, որոնք թոյլ են տուել այդ փախուստը։

ԹԻՖԼԻՍԻ ԴՈՒՄԱՅԻ ՆԻՍՏԸ

—

Հինգշաբթի, մայիսի 29-ին, երեկոյեան ժամը 8-ին կայացաւ Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը, որին ներկայ էին 38 ձայնաւորներ։

Բանալով նիստը, քաղաքագլուխ իշխան Վ. Ն. Չերքեզովը արտասանեց հետևեալ ճառը.

«Ինձ վիճակվում է բանալ ներկայ ժողովը՝ հաղորդելով ամենին յայտնի վրդովեցուցիչ սպանութեան մասին։ Սպանված է բարձր սրբազան Նիկոն արքեպիսկոպոսը, Վրաստանի էկզարխը։ Թիֆլիսում անկասկած մի մարդ չի գտնվի, որ զայրոյթի զգացմունք չը զգայ այդ անլուր յանցանքի լուրը լսելով։ Հարկաւորութիւն չը կայ խօսելու ոչ սպանվածի անձնաւորութեան, ոչ էլ այն խորին վրդովման մասին, որ զգում է մեզանից իւրաքանչիւրը կատարված չարագործութեան վերաբերմամբ, որի հետևանքները կարող են մեծ և ծանր լինել։ Մաքերի այն յուզմունքների և կրքերի սանձարձակութեան ժամանակ, որ այժմ նկատվում է ամեն տեղ, դէպքերը կարող են ամենակորստաբեր բնաւորութիւն ընդունել։ Այն խելացնորը, որը յղացաւ այդ ոճիրը, ահագին յանցանք գործեց իր հայրենիքի և այն ամբողջ երկրի առջև, ուր մենք ապրում ենք։ Վարչութիւնը առաջարկում է Դումային իր զայրոյթը յայտնել, որոշելով՝ 1) քաղաքից պատգամաւորութիւն ուղարկել Գրիգորիս եպիսկոպոսին և Նորին Կայսերական Մեծութեան Փոխարքային իր խորին զգացմունքները յայտնելու չարագործութեան առիթով, 2) իր ամբողջ կազմով ներկայ լինել հանգուցեալ արքեպիսկոպոս Նիկոնի մարմինը փոխադրելու ժամանակ 3) դագաղի վրա դնել արծաթապատ սուրբ պատկեր քաղաքից, 4) պատուել հանգուցեալ Վրաստանի էկզարխի յիշատակը ոտի կանգնելով և 5) փակել ներկայ ժողովը ի նշան սգի»։

ՎՐԱՍՏԱՆԻ ԷԿԶԱՐԽ ՆԻԿՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ

—

Մայիսի 28-ին, Վրաստանի էկզարխի հոգեհանգստի ժամանակ, դագաղի վրա դրված էր մի մեծ արծաթեայ պսակ հետևեալ մակագրութեամբ. «Ամենայարգելի վաղամեռ զոհված Վրաստանի էկզարխ [illegible] Նիկոնին՝ Կովկասի Փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցով-Դաշկովից և իր կողակից կոմսուհի Ե. Ա. Վօրօնցովա-Դաշկովայից»։

—

Մայիսի 29-ին Կովկասի Փոխարքային ներկայացաւ Թիֆլիսի նահանգի ազնուականութեան պատգամաւորութիւնը, որի մէջ մտնում էին նահանգական և գաւառական ազնուականների պարագլուխները, և արհամարհանք ու խորագոյն ցաւակցութիւն յայտնեց Վրաստանի էկզարխ Նիկոն արքեպիսկոպոսի եղեռնական մահվան առիթով։

—

Մայիսի 29-ին, Թիֆլիսի քաղաքային դումայի նիստում քաղաքագլուխը հաղորդեց էկզարխի սպանութիւնը. դուման յիշատակը յարգեց յոտնկայս, որից յետոյ քաղաքագլուխը նիստը փակված յայտարարեց։

—

Ռուսաց սինօդը հեռագրով կարգադրել է էկզարխի պարտականութիւնները ժամանակաւորապէս յանձնել Բագուի եպիսկոպոս Գրիգորիին։

—

Ուղղափառ հոգևոր վարչութիւնը պատուիրել է վրաց էկզարխութեան բոլոր եկեղեցիներում մի տարի շարունակ յիշատակել չարագործների ձեռքից ընկած Վրաստանի էկզարխի անունը եկեղեցական արարողութիւնները կատարելու ժամանակ։

—

Իշխանութեան կարգադրութեամբ, բոլոր թատրոնական ներկայացումները և այլ զուարճութիւնները էկզարխի սպանութեան առիթով վերացված են մինչև թաղումը։

—

Հանգուցեալ էկզարխի կտակի համաձայն, նրա մարմինը կը տեղափոխվի Վլադիմիրի նահանգը՝ Վլադիմիր քաղաքի համանուն տաճարի բակում հողին յանձնելու համար։ Դիակը Թիֆլիսի կայարան կը տանվի երկուշաբթի, յունիսի 2-ին։

ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

—

Հինգշաբթի, մայիսի 29-ին, կայացաւ հնագիտական ընկերութեան նիստը, ներկայութեամբ 28 անձանց, ուր պրոֆ. Մառը կարդաց մի հետաքրքրաշարժ զեկուցումն չելեբի բառի և քիւրդերի ծագման հարցի մասին։ Այդ բառի քննութիւնը հաստատում է մի ամբողջ կուլտուրական կապ քիւրդերի, հայերի և թիւրքերի միջև։ Զեկուցումը թէև մասնագիտական, բայց շատ շահեկան էր նրանց համար, որոնք զբաղվում են արևելեան հին ազգերի կուլտուրայի հարցով։ Կաշխատենք յաջորդ անգամ աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

◆ Կովկասի Փոխարքայի խորհրդում մօտիկ ապագայում քննվելու է Գէօքչայ լճի ձկնորսութիւնը կապալով տալու հարցը նոր հիմունքներով։

◆ Թիֆլիսի նահանգապետի դիւանատունը հաղորդել է, որ պարսից կառավարութիւնը Թիֆլիսի պարսից գլխաւոր հիւպատոս է նշանակել Միրզա Քեազիմ խան Մօտամաղէն-էս-Սալթանէին։

◆ Վիրաւորված ռօտմիստր Կարաուլովի դրութիւնը մայիսի 28-ից դէպի լաւն է գնում։ Նրան Միքայէլեան հիւանդանոցից տեղափոխել են Կարմիր խաչի հիւանդանոցը։ Բժիշկների վկայութեամբ նա կազատվի։

◆ Թիֆլիսում, վերջին օրերի դէպքերի պատճառով, շրջում են ուժեղ զինուորական պահակախմբեր։

◆ Մայիսի 28-ին, երեկոյեան, Թիֆլիսի ոստիկանութիւնը ձերբակալեց 20 մարդ, կասկածելով նրանց պահնորդական բաժնի կառավարիչ ռօտմիստր Կարաուլովի վիրաւորման մէջ։

◆ Թիֆլիսի ոստիկանութեան ձեռքով փակվել են այն բոլոր խանութները և կրպակները, որոնք գտնվում են ռօտմիստր

Կարաուլովի սպանութեան տեղի մօտ։ Փակված և կնքված է նաև Վելեամինովսկի փողոցում «Անատոլիա» ճաշարանը, որի մէջ էկզարխի սպանութեան օրը ոստիկանութիւնը խուզարկութիւն կատարեց և թէև ոչինչ չը գտաւ, բայց ձերբակալեց մի քանի ճաշողների։

◆ Մայիսի 29-ին, կէսօրվայ մօտերը, Կաէնեավսկայա փողոցով անցնում էր Թիֆլիսի էլեքտրաքարշի սպանված վատման Գորբաչովի սգահանդէսը։ Չը հասած Ելիզավետինսկայա փողոցին, երկու տեղացի չարագործներ ատրճանակներից սկսեցին կրակել սգահանդէսի վրա։ Կրակողների ետևից ընկան ոստիկանութեան պաշտօնեաները։ Նրանցից մէկը փախաւ Ելիզավետինսկայա փողոցով, կրակելով իր ետևից վազող քաղաքապահների վրա, բայց բերդանի հրացաններով սպանվեց. միւսը կարողացաւ ցատկել ցանկապատից և անյայտացաւ այգիների մէջ։ Սգահանդէսին մասնակցողներից ոչ ոք վիրաւորված չէ։

◆ Այսօր, Թիֆլիսի բորսային դահլիճում, երեկոյեան ժամը 7 ին, նշանակված է Հ. գր. ընկ. արտակարգ ընդհանուր ժողովը։

◆ Մայիսի 29 ից Թիֆլիսի պօստ-հեռագ. դրասենեակի բաժանմունքներում (Կուկիա, Ելիզավետինսկայա փողոց, Հալաբար, Նաւթլուղ) դրամական շրջանառութիւնները ժամանակաւորապէս դադարում են։

◆ Թիֆլիսի ժամ. գեն.-նահանգապետը հրամայել է փակել 5-րդ քաղաքամասում գտնվող բոլոր գինետները, խմիչքեղէնի խանութները, պանդոկները, ճաշարանները, թէյարանները մինչև զինուորական դրութեան վերացվելը։

◆ Մայիսի 29 ին, Սլիվիցկու տանը բնակվող 17 տարեկան Շուշան Ուզունեանցի բնակարանը մտել է մի անյայտ մարդ և մի տգեղ առաջարկ է արել. երբ Ուզունեանցը մերժել է, անյայտը վերջինին գլխից մի քանի վէրք է հասցրել և անյայտացել է։ Վիրաւորվածին տարել են Միքայէլեան հիւանդանոց։

◆ Մեզ հաղորդում են, որ վաղը, յունիսի 1-ին, նշանակված Ջգրաշէնի ս. Աւետեաց եկեղեցու ծխական ընդհանուր ժողովը յետաձգված է և կը կայանայ հետեւեալ կիրակի, յունիսի 8-ին։

◆ Թիֆլիսում երթևեկող էլեքտրաքարշի վերաբերեալ պարտաւոր կանոնները խախտելու պատճառով տուգանքի են ենթարկված՝ էլեքտրաքարշի կոնդուկտորներ 1) Վ. Ազնիեվը 15 ր. կամ 1 ամիս բանտարկութեան, 2) Նիկ. Աբոյեվը 5 ր. կամ 10 օր բանտարկութեան, և անօնիմ ընկ. վերատեսուչ Մ. Ի. Ալիբէգովը 30 ր., չը վճարելու դէպքում 1 ամիս բանտարկութեան։

◆ Թիֆլիսում սկսվել են Թիֆլիսի նահանգի հարկաբաշխ տեսուչների համագումարի նիստերը։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց 300 րուբլի տուգանք առնել էլեքտրաքարշի ընկերութիւնից նրա համար, որ նա առանց քաղաքային վարչութեան թոյլտուութեան ձեռնարկել է Օրթաճալայի էլեքտրաքարշի գծի շարունակութեան կառուցման։

◆ Կովկասեան շերմապահական կայարանի գործունէութիւնը քննելու համար մի յատուկ մասնաժողով է եկել Պետերբուրգից։

◆ Գորու գաւառի Դօէսի գիւղում երևացել է եղջիւրաւոր անասունների ժանտախտ։ Այնտեղ է գնացել մի անասնաբոյժ։

◆ Գրօզնայի նաւթահորերից փետր. և մարտ ամիսներում քաշել են 5,000,000 փ. նաւթ, իսկ մարտ և ապրիլ ամիսներում քաշածները դեռ չեն հաշուել։ Եթէ այսպէս աճով շարունակվի, պէտք է սպասել, որ միայն 1908 թ. ընթացքում կը ստացվի 50 միլիոն փութ նաւթ։ Սակայն բենզինը շատ վատ դրութեան մէջ է։

◆ «Зак.» լրագրի տեղեկութիւնից երևում է, որ Օզուրգէթում վերջին ժամանակներս ուժեղ խուզարկութիւններ և ձերբակալութիւններ են կատարվում։

ԲԱԳՈՒԻ ԼՈՒՐԵՐ

◆ Կատարված քննութիւնը այժմ պարզել է, որ քաղաքային հաշտարար դատարանի մէջ այդ բաժնի նախկին դիւանապետ Ասկերովի ձեռքով վատնված գումարները հասնում են 224,000 րուբլու։ Ենթադրութիւն կայ, որ վատնված գումարները պէտք է լինեն աւելի քան 250,000 րուբլի։

◆ Քաղաքապետի որոշման համաձայն, «Բրիստոլ» հիւրանոցը պահող թիւրքահպատակ Վ. Դ. Ռամբակակին ենթարկված է 500 րուբլի տուգանքի այն պատճառով, որ նա ժամանակին չէ մտցրել իր գրքում այն անյայտ անձի անցագիրը, որը իջևանել էր նրա հիւրանոցում և իր վարձած համարի պատը բանալով՝ նրա ներքևը գտնվող մանուֆակտուրային մագազինից խոշոր գողութիւն էր կատարել ու անյայտացել։

◆ Բագուի պօստ-հեռագրատան կառավարիչը տեղեկացնում է ի գիտութիւն հասարակութեան, որ ներկայ տարվայ յունիսի 1-ից մասնաւոր ծանրոցների պահպանութեան համար սահմանվում է օրական 6 կոպ. վճար ամեն մի ծանրոցին (посылка)։ Այդ վճարները հաշվելու են երկրորդ հրաւիրաթուղթը ծանրոցատիրոջը յանձնելուց 7 օր յետոյ։

◆ Լուր է պտտում, որ Բագուի առևտրականներ՝ Մանթաշեան, Թաղիեվ և եղբ. Արզամասցեվների առևտրական տան հաւատարմատար Սինելշչիկովը բանակցութիւններ են վարում «Նադեժդա» ընկերութեան գործերի համար կազմված լիկվիդացիայի մասնաժողովի վարչութեան հետ՝ Կասպից ծովի վրա գտնվող այդ ընկերութեան ծովային նաւատորմը գնելու համար։ Շոգենաւային այդ նոր ընկերութիւնը գործելու է «Трудъ» ընկերութեան դրօշակի տակ 900,000 րուբլի հիմնական դրամագլխով։

◆ Բիբի-Էյբաթում «Շիխովօ» ընկերութեան մեքենայական գործարանի վարչութիւնը մօտ օրերս յայտնել է կատելնի բաժանմունքի իր բոլոր բանուորներին, որ ֆիրման պատրաստ է վճարել նրանց իւրաքանչիւրին երեքական ամսվայ ռոճիկը առաջուց, եթէ նրանք յօժարակամ ծառայութիւնից հեռանալու համար հրաժարական ներկայացնեն։ Հակառակ դէպքում ֆիրման ստիպված պիտի լինի փակել կատելնի բաժանմունքը։ Բանուորները առայժմ ոչ մի պատասխան դեռևս չեն տուել ֆիրմային։

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

◆ Յայտնի «պատրիոտ» գործիչ, պատմութեան մագիստրոս, իրաւաբանական դպրոցի պրոֆեսոր Ի. Պ. Սենիգովը, որ մի շարք շանտաժների մէջ մեղադրվելու պատճառով ոստիկանական հսկողութեան է ենթարկված, մայիսի 21-ին, նահանգական դատարանի առջև հանդէս է եկել իբրև գրագողութեան (կոնտրաֆակցիայի) մէջ մեղադրվող։ Նորերս նա լոյս էր ընծայել մի գիրք «Տեղեկութիւններ հրէաների և Արևելքի ուրիշ ազգերի պատմութիւնից» վերնագրով, որ բաղկացած է ընդամենը 112 երեսից։ Բանից դուրս է գալիս, որ այդ «պատրիոտ» պրոֆեսորը դրանից 80 երեսը արտատպել է Մելգունովի «Պատմութեան առաջին դասերը.—Հին Արևելքը» դասագրքից։ Մելգունովի քաղաքացիական պահանջը պաշտպանող երդ.-հաւատ. Կուլիշերը, իր մեղադրանքը հիմնելով, 1,685-րդ յօդուածի վրա, 2,400 րուբլու պահանջ է ներկայացրել։ Դատարանը պրոֆ. Սենիգովին ենթարկել է 200 րուբլի տուգանքի և լիակատար բաւարարութիւն է տուել քաղաքացիական պահանջ յայտնողին։ («Р. В.»)

◆ Պետերբուրգում էլեքտրաքարշների ծառայողները իտալական գործադուլ են սկսել։ Նովօ-Դերեվենսկայա գծի վագոնավարները թէև տանում են վագոնները, բայց նրանք այդ ամբողջ տարածութիւնը փոխանակ անցնելու 20—22 րօպէում՝ անցնում են 35—40 րօպէում։ «Пет. Газ.» լրագրի ասելով, այդ գործադուլը սկսվել է 20 պահեստի վագոնավարներին, որոնք փոխարինում էին հիւանդ կամ բացակայ եղող ընկերներին, պաշտօնից արձակելու պատճառով։ («Р. Утро»)

◆ «Былое» ամսագրի խմբագիր Վ. Բուրցեվը իր հրատարակութիւնը նորից փոխադրում է արտասահման, ուստի խնդրում է ուղարկել իրան՝ ազատագրական շարժման պատմութեան վերաբերեալ յիշողութիւններ և ուսումնասիրութիւններ, նոյնպէս և տեղեկութիւններ ու նիւթեր ազատագրական շարժմանը մասնակցողների կենսագրութիւնների մասին։ Բացի դրանից՝ խմբագրութիւնը խնդրում է ուղարկել իրան գրքեր, բրօշիւրներ և թերթիկներ ինչպէս ձախակողմեան կուսակցութիւնների, նոյնպէս և սև-հարիւրեակայիններինը, կառավարչական չը հրատարակված հրատարակութիւններ, շրջաբերականներ, նիւթեր քաղաքական դատավարութիւնների մասին, նամակներ և օպպօզիցիօն գործիչների լուսանկարները։ Այդ բոլոր նիւթերը մասամբ կը մտնեն գրականութեան մէջ, մնացեալներն էլ կը յանձնվեն բացվելիք թանգարանին։ («Русь»)

◆ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան առանձին յանձնարարութիւնների պաշտօնեան վերջացրել է իր սկսած քննութիւնը Մինսկ քաղաքի «ազատ սիրոյ լիգայի» գործի մասին։ Նա իր ներկայացրած զեկուցման մէջ ժխտում է ուսանող երիտասարդութեան մասնակցութիւնը այդ լիգային։ («Р. Сл.»)

◆ Կիևի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Զալովը, մօտ ժամանակներս այցելելով Պոլտավա, նկատել է, որ Կոտլեարեվսկու անուան դպրոցի ցուցանակը գրված է մալօռոսական լեզուով՝ «Կոտլեարեվսկու անուան դպրոցը»։ Առաջարկված է անմիջապէս փոխել նրան ռուսերէն լեզուի։

◆ Օդեսսայի քաղաքային դուման շարունակում է լիկվիդացիայի ենթարկել իր կրթական հաստատութիւնները։ Իր վերջին նիստում նա մերժել է գումար յատկացնել կիրակնօրեայ դպրոցների պահպանութեան համար, որոնց մէջ սովորում էին մի քանի հազար հոգի։ Դրանց փակումով քաղաքի ծայրերի ազգաբնակութիւնը կը զրկվի արտադպրոցական ուսումից։ Մերժել են գումար յատկացնել նոյնպէս և քաղաքի մէջ չափազանց հանրամատչելի հրապարակական բնագիտութեան դասախօսութիւններին, որոնց գոյութիւնը երկար տարիներ է որ շարունակում էր համալսարանի բնագէտների ընկերութիւնը։ Միւս կողմից դուման 5000 րուբլի է յատկացնում իբրև նպաստ այն գիմնազիային, որը մտադիր է հիմնել իսկական ռուս մարդկանց միութիւնը։ («С. Сл.»)

◆ Աշերադենից (Շուրջբալտիական երկիր) հեռագրում են «Р. Сл.» լրագրին. «Այստեղ ցրեցին բատրակների բազմամարդ միտինգը, որոնք հաւաքվել էին պահանջելու իրանց տէրերից աւելացնել դաշտային աշխատանքների վարձը։ Միտինգը կազմակերպողները կալանաւորված են»։

ՄԱՄՈՒԼ

«Հայոց հարցը Պետական Դումայի մէջ» վերնագրով մի յօդուածով «Новое Время» թերթը (№ 11549) խօսելով այն ճառի մասին, որ արտասանել էր Յ. Սաղաթէլեանը, չէ համաձայնում նրա ասածների հետ և պնդում է, որ «հայկական ձգտումների մասին լեգենդան պէտք է վերագրել ոչ թէ «ստոր ձգտումներ ունեցող մութ գործիչների հնարած հէքիաթին», ինչպէս ասում է Դումայի յիշեալ անդամը, այլ նոյն հայկական ինտելիգենցիային, յանձին իր գաղտնի և յայտնի կոմիտէտների»։

Եւ իբրև ապացոյց, ռուս թերթը ասում է հետևեալը. «1877—78 թ. պատերազմից յետոյ, Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածով, իսկ յետոյ Կիպրոսի դաշնագրով, ճանաչվեց Թիւրքաց հայերի վիճակի բարւոքման անհրաժեշտութիւնը։ Այդ ժամանակ դեռ գոյութիւն չունէր ազգային անկախութեան հարցը։ Հայկական շարժումը սկսվեց 1885-ին։ Արևմտեան Եւրոպայի զանազան տեղերում ապրող հայերը միացան, սկսեցին կազմել ազգային կոմիտէտներ, հրատարակել առանձին տեսութիւններ ֆրանսիական և անգլիական լեզուներով և կազմակերպել քաղաքական բանկէտներ՝ ճառախօսութիւններով անկախութեան մասին։ Ֆրանսիացիները վերաբերվեցին նրանց բաւական սառն, բայց Լօնդօնում, որ վերաբերվում էր մեզ միշտ թշնամաբար, հայկական առաջին ագիտատորները լաւ ընդունվեցին, շնորհիւ Գլադստօնի, ուստի և այդտեղ կազմվեց գլխաւոր հայկական կոմիտէտ, որը յարաբերութեան մէջ մտաւ իր դաւանակիցների հետ Թիւրքիայում։

«Ֆրանսիական նախկին դեսպան Կամբօնը նախագահ Կազիմիր Պերիէին ուղղած իր նամակի մէջ հետևեալ կերպով է բնորոշում ծագած քաղաքական շարժումը. «Որքան շատ էին աշխատում հաւատացնել հայերին, որ Հայաստանը գոյութիւն չունի, այնքան շատ նրանք հաւատում էին նրա գոյութեան, և այդպիսով մի քանի տարվայ մէջ կազմվեցին գաղտնի ընկերութիւններ, որոնք իրանց քարոզութեան օգտին շահագործում էին Թիւրքական վարչութեան սխալները և թերութիւնները և տարածում էին ամբողջ Հայաստանում ազգային անկախութեան գաղափարը»։ Բայց ինչ անկարգութիւններ և ծագէին, Կամբօնի կարծիքով, «չը պէտք էր մտածել անգամ անկախութեան մասին, որովհետև Հայաստանը չէ կազմում, ինչպէս Բուլգարիան և Յունաստանը, մի երկիր՝ սահմանափակված բնական սահմաններով կամ միատարր ազգաբնակութեան կուտակմամբ։ Հայերը ցրված են Թիւրքիայի չորս անկիւններում, նրանք ամեն տեղ խառն են մուսուլմանների հետ»։

Բերելով այս կարծիքը, ռուս թերթը ասում է, թէ ուրեմն Սաղաթէլեանի յիշած «լեգենդան» դաւանել են և ֆրանսիական կառավարութեան ներկայացուցիչները։ Անցնելով ապա Սաղաթէլեանի ճառի այն մասի քննութեան, թէ «հայերը երբէք հակառուսական տրամադրութիւն չեն ցոյց տուել», լրագիրը ասում է. «Արդեօք աւելի լաւ չէ՞ր անի Սաղաթէլեանը, պահպանելով արդարութիւնը, եթէ յիշէր այն գաղտնի ընկերութիւնների և կոմիտէտների մասին, որոնք բուն են դրել Անդրկովկասում հասարակ ժողովուրդը յեղափոխականացնելու և հարուստ հայերից լրբօրէն փող կորզելու նպատակով, ընտրելով դրա համար հէնց այն ամենածանր րօպէները, որ կրում էր ռուսաց պետականութիւնը...։ Եթէ հայերի Լօնդօն գնալը 1885-ին հիմք դրեց մեր բնական սառնութեան դէպի Թիւրքաց հայերի վիճակը, դրանից յետոյ հայ ինտելիգենցիայի վարմունքը Անդրկովկասում, գաղտնի կոմիտէտների գործունէութեան հետ միասին, չէր կարող կասկած չը յարուցանել կառավարութեան կողմից, իսկ ռուսաց հասարակութեան կողմից յանդիմանութիւն՝ հայ ղեկավարների հասցէին, թէ ձգտում են մի անհող բանի և ոչնչով չարդարացվող սեպարատիզմի»։

Եթէ հայ ժողովրդի ներկայացուցիչը Պետական Դումայում լինէր ոչ մի կուսակցութեան չը պատկանող անձն, ոչ թէ անկարող և ապիկար անձն, այլ լինէր մի գիտակ, ձեռնհաս, փաստերի և պատմական իրողութիւնների հետ ծանօթ անձն, անշուշտ, շատ և շատ հեշտ էր նրան գրել, հերքել արմատականապէս «Новое Время» թերթի ասածները կամ գոնէ պարզաբանել այնպէս, ինչպէս ճշմարտութիւնն է։

Բայց միթէ «դաշնակցական» Սաղաթէլեանը իր երկնոյթ դիրքով ընդունակ կը լինի՞ վստահութիւն ձեռք բերել յօգուտ ազգի ընդհանրութեան շահերին։

*

Խօսելով «Մայր» թերթի խմբագրի դէմ գործ դրած զզուելի բռնութեան դէմ, «Վտակ» թերթը կրկնում է այնպիսի խօսքեր, որ «Մշակը» հազար անգամ արտայայտել է, բողոքելով ամեն տեսակ բռնութիւնների դէմ և սակայն նրա այդ բողոքները արժանացել են «վտակական» մարդկանց կողմից ծաղրի։ «Վտակը», ի թիւս այլոց, գրում է.

«Ասացէք, խնդրեմ, ինչու մէկը կարող է, արտօնութիւն պիտի ունենայ քարոզելու և պաշտպանելու մի կրօնական վարդապետութիւն, իր հաւատի և համոզմունքի համաձայն, իսկ մի ուրիշը չէ կարող ազատօրէն արտայայտել իր միտքը, իր համոզմունքը։ Սա ինչ արտօնութիւն է»։

Ապա մի ուրիշ տեղ ասում է.

«Եւ վերջապէս մի՞թէ ուրիշ ճանապարհ չը կար, փարիսեցիներ և կեղծաւորներ, ձեր «վիրաւորված զգացումը» պաշտպանելու համար։ Կայ օրէնք, կայ դատաստան»։

Կրկնում ենք, այս խօսքերը հազարաւոր անգամ կրկնել է «Մշակը»։ Բայց «վտականները», որ դեռ երէկ աշխատեցին մեղմացնել Միլիւկովի դէմ գործ դրած բռնութեան դէպքը, այսօր նոր են սկսել հարայհուրայ բարձրացնել, երբ այդ բռնութիւնը իրանց կաշուի վրա փորձեցին։

Այո, պ. «վտականներ», շնորհաւորում ենք, որ վերջապէս հասկանում էք՝ թէ գաղափարական հակառակորդների դէմ բռնութիւն չը պէտք է գործ դնել, թէ քաղաքակիրթ ժողովուրդները վաղուց ձեռք են բերել խօսքի, խղճի և, կաւելացնենք, համոզմունքի ազատութիւն։ Եթէ դուք այդպէս վարվէիք և քարոզէիք միշտ, մենք երբէք Տէր-Օհանեանների, Վիկտորների և այլոց վրա գործ դրված զզուելի բռնութեան ականատես չէինք լինի։

Եւ դարձեալ կը կրկնենք՝ «ինչ որ սերմանել էք, այն էլ այսօր հնձում էք»։

ՆԱՄԱԿՆԵՐ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 30 մայիսի

Յայտնում եմ ի գիտութիւն հետաքրքրվողների, որ պ. Գր. Ճէպչեանի նախաձեռնութեամբ՝ յօգուտ կարկուտից վնասված Նորբայազէտցիների՝ 1907 թ. հոկտեմբերին կայանալիք ներկայացման համար իմ վաճառած տոմսակներից եղել է մուտք 141 ր. 80 կ., որից 120 ր. 80 կ. յանձնել եմ պ. Գր. Ճէպչեանին, իսկ 21 ր. պ. Ալ. Թամամշեանին, որպէս ներկայացման կառավարիչների։

Վ. Պետրոսեան

Բեռն, 13 մայիսի

Թոյլ տուէք, խնդրեմ, մի քանի խօսք ասել պ. Աթաբէգեանի՝ Թիֆլիսում արտասանած «Պատմահայեցողութիւն» դասախօսութեան մասին, որի հետ ծանօթանալ կարողացայ «Վտակի» միջոցով։

Մի կողմ թողնելով այն մի քանի՝ մեր կարծիքով հիմնովին սխալ կարծիքների մասին խօսելը, որոնք պ. Աթաբէգեանը իր դասախօսութեան ընթացքում յայտնել է և կամ «Վտակի» լրատուն իր ծանօթութիւնների մէջ արտայայտել, կը ցանկանայի մի քանի խօսք ասել միայն մի կէտի մասին, որի վրայից լռութեամբ անցնել միանգամայն անկարելի է։

Պ. Աթաբէգեանը Վունդի պսիխօ-ֆիզիքական պարալելիզմը նմանեցրել է պրիմիտիվ, նախնական մարդու մտածողութեան և գիտութեան համար մի դժբաղդութիւն է համարել, որ այդ «գռեհիկ հայեցողութիւնը» մուտք է գործել գիտութեան մէջ յանձին Վունդի։

Ով Վունդին ճանաչում է, նրա համար պարզ պէտք է լինի, թէ այդ հսկայ մտածողը ինչ մեծութիւն է գիտութեան համար, թէ նա ինչպիսի վաստակներ է տուել գիտութեանը, որոնք դարեր շարունակ անմոռանալի կը մնան։ Նախնական մտածողութեան նմանեցնել մի մարդու թէօրիան, որի հետ կապվում է փիլիսոփայական մի ամբողջ շկօլա, որը համաշխարհային մի հանճար է և որի ազդեցութիւնը համարեա ամեն մի փոքր ի շատէ լուրջ մտածողի վրա ներկայումս զգալի է,—ամենապակասը մի մեծ յանցանք է, որը որակելու համար խիստպէս մի նոր բառ պէտք է գտնել։ Վունդի նշանակութիւնը ներկայ գիտութեան համար՝ ես աշխատել եմ անցեալներում «Մշակի» մէջ ուրուագծել, ուստի և այդ հարցին դառնալը աւելորդ եմ համարում։ Թողէ մի յարմար առիթով այս վիճելի խնդրին նորից վերադառնամ։ Մեր նպատակն է միայն՝ յիշեցնել մեր դասախօսներին, որ գիտական ծանրակշիռ խնդիրներին չէ կարելի ճառախօսի տրամաբանութեամբ և բարեխղճութեամբ մօտենալ։

Գ. Էգլեան

ՄԻ ՆԱՄԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(Նամակ խմբագրութեան)

Բագու, 25 մայիսի

Տեղիս «Баку» ռուսերէն լրագրի երէկվայ համարում օրիորդ Ն. Խ. Օհանեանը մի սրտաճմլիկ բովանդակութիւն ունեցող նամակ էր զետեղել, որը ամբողջ Բագուի հայ հասարակութեան խօսակցութեան նիւթը դառաւ։

Որտեղով էլ անցնում էիր—գրասենեակ, ձիաքարշ, բազար, խանութ, երկաթուղի, կայարան—ամեն տեղ ամեն մէկի բերանից լսվում էին «օր. Օհանեան, Գեր. Մուրադեան և Հնչակեան կուսակցութիւն» խօսքերը։

Օր. Օհանեանի ողբերգական կենդանի մահը հայ, ռուս, թուրք, վրացի, հրէայ և այլ ազգերին յայտնի է. պարբերական հրատարակութիւնները շաբաթներով խօսեցին։ Խօսեցին «Баку», «Бакинецъ», «Каспій» ռուս լրագիրները. մի քանի յօդուածներով պ. Ս. Գարագաշը «Մշակի» ընթերցողներին ծանօթացրեց դժբաղդացած օրիորդի մասին. սակայն ինչ հետևանք ունեցաւ 5—6 ամսվայ ընթացքում.—ոչինչ։ Հնչակեանները միմիայն տեռորի ենթարկեցին օրիորդին փախցնող ու բռնաբարող Մուրադեանի ընկերոջը, որը, որքան գիտենք, մի ժամանակ հնչակեան է եղել, ապա ռուս. ս.-դ. կուսակցութեան պատկանելիս, վերջերում անիշխանական Քալաշեանի խմբի մէջն էր, իսկ տեռորական ակտի ժամանակ չանտաժիստ։ Իսկ Մուրադեանը հնչակեան էր և է, ինչպէս մի ազդում հէնց իրանք հնչակեանները յայտարարեցին նրա հնչակեան անդամ լինելը։

Օրիորդը իր նամակում կոչ է անում հնչակեաններին և տասը օր ժամանակ տալիս, որպէսզի հնչակեանները իրանց անդամին պատժեն. ապա օրիորդը պնդում է, որ առևանգող Մուրադեանը հէնց հնչակեանների մէջն է ապրում և պահպանվում նրանցից։

Բացի այդ, օրիորդը նկարագրելով իր դժբաղդութիւնը, որի պատճառով հայրը, 60 տարեկան ծերունին, անձնասպանութիւն գործեց չը տանելով տեղի ունեցած անպատւութիւնը. սակայն այդ բոլոր չարիքից յետոյ, նոյն Մուրադեանը նամակներով սպառնալիքի տարափ է թափում խեղճ աղջկայ գլխին, որը թէ զուրկ է պաշտպան եղբօրից և թէ զրկվեց միակ պաշտպան հօրից։

Վերջին տողերում օրիորդը իր պայմանի (10 օրից յետոյ) անելիքի մասին երկիւղ կրելով՝ դիմում է բարեխիղճ ու խիղճը կենդանի մարդկանց օգնութեանը։

Ես դժբաղդութիւն եմ ունեցել մի անգամ օրիորդի հետ խօսելու. նրա ասածներից երևում է, որ այդ առևանգման մէջ, բացի հնչակեան Մուրադեանից, ակտիվ մասնակցել են և ուրիշներ, որոնց անունները չը գիտեմ գիտէ՝ չէ ասում, թէ չը գիտէ՝ չէ ասում։

Ինչպէս հասարակութեան մի անդամ և մի ազատ քաղաքացի, պարտք եմ համարում հրաւիրել հնչակեան կուսակցութեան մաքրելու իր վրայից այն սև ու անպատւաբեր բիծը, որը նա ստացաւ օր. Օհանեանի առևանգման պատճառով։

Դա այնպիսի մի արատ է հնչակեանութեան հասցէին, որ ոչ ոք դրժել չէ կարող, որովհետև տասնեակ հազարաւոր մարդկանց ու կանանց բերանից է մեղադրանք հնչվում։ Մանաւանդ որ կան այնպիսի հնչակեան գիտակից երիտասարդներ, որ իրանց քաջ յայտնի է կուսակցութեանը մեղադրելու ամուր փաստերը, սակայն, կոյր կուսակցական լինելով, լռում են։ Պարոններ, լռութիւնը այդպիսի մի գործի մէջ անպատւաբեր մի քայլ է և դուք դրանով աւելի անգունդը կը գլորէք կուս. վարքն ու բարքը, քան ծածկելով մի քանի անհատների անունները, կամ թաքցնելով, պաշտպանելով մի չարագործի, որի նմանների պատճառով մենք սահմանն ենք անցնում այն քիւրդերին պատժելու, որոնք հայ օրիորդներ են բռնաբարում, առևանգում ու կենդանի մորթում...

Սպասենք մինչև 10-ը օրը, տեսնենք օրիորդը ինչ դիրք կը բռնէ և ինչպիսի՞ դիրքի մէջ կը մտնէ Հնչակ. կուս., որից և օրիորդը պահանջում է պատիւ։

Հայ զինուոր

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՕՕՊԵՐԱՑԻԱՆԵՐԸ ԱՆԳԼԻԱՅՈՒՄ

«Русск. Вѣд.»-ի Լօնդօնի թղթակիցը իր վերջին թղթակցութիւններից մէկում շատ հետաքրքրական տեղեկութիւններ է հաղորդում կօօպերատիվ ընկերութիւնների մասին Անգլիայում, որի հետ աւելորդ չենք համարում ծանօթացնել «Մշակի» այն ընթերցողներին, որոնք հետաքրքրվում են կօօպերատիվ ընկերութիւններով առհասարակ և որոնք մանաւանդ զբաղվում են մեր երկրում էլ այդպիսի ընկերութիւններ կազմակերպելու խնդրով։

Օգոստոսին Նիւպօրտ քաղաքում կայանալիք Անգլիայի կօօպերատիվ ընկերութեանց սովորական տարեկան ընդհանուր ժողովին զեկուցվելիք տարեկան հաշւից, որ արդէն պատրաստ է, երևում է, որ կօօպերացիաների կազմելու շարժումը Անգլիայում հսկայական քայլերով է առաջ գնում։ Հաշւում բերված թւանշաններից երևում է, որ 1907 թւականին կօօպերացիաների թիւը Անգլիայում հասել է 1,582-ի, որոնց մէջ անդամ են եղել 2,434,085 հոգի, այսինքն՝ 101,331 անդամով աւելի քան նախորդ 1906 թւականին։ Կօօպերատիվ ընկերութիւնների կապիտալը (ակցիաներ) 1907 թւականին եղել է 32,055,229 ֆունտ ստերլինգ, որ անում է մօտաւորապէս 320,552,290 րուբլի։ Նախորդ տարվայ համեմատութեամբ այդ կապիտալը աւելացել է մօտաւորապէս 17,974,200 րուբլով։ Մէկ տարվայ ընթացքում կօօպերացիաները շրջանառութեան մէջ ունեցել են մէկ միլիարդ րուբլի (105,717,699 ֆունտ ստերլինգ)։ Դա նախորդ 1906 թւականի շրջանառութիւնից աւել է 7,783,942 ֆունտ ստերլինգով։ Ստացված զուտ արդիւնքն էլ նախորդ տարվանից աւելի է։ 1906 թւականին կօօպերացիաները զուտ արդիւնք ստացել էին 10,974,995 ֆունտ ստերլինգ, (թւերը չը շփոթելու համար պէտք է մէկ ֆունտ ստերլինգը հաշւել 10 րուբլի), իսկ 1907 թւականին զուտ արդիւնք եղել է 12,003,341 ֆ. ստերլինգ։

1907 թւականին անգլիական կօօպերացիաները գլխաւորաբար զբաղված են եղել իրանց անդամների համար մատչելի և յարմար տներ ու բնակարաններ կառուցանելու հարցով։ Այդ բանի համար նրանք ծախսել են 96 միլիօն րուբլի։ Իսկ ներկայ 1908 թւականից կօօպերացիաները իրանց ուշադրութիւնը կենտրոնացրել են երկրագործութեան ու մշակութեան համար հողեր ձեռք բերելու վրա։

Յայտնի է, որ Անգլիան երկրագործութեան երկիր չէ։ Գիւղական բանւորների թիւր այնտեղ հասնում է ընդամենը 869,000 հոգու։ Իսկ եթէ հաշւելու լինենք բոլոր ֆերմերներին, խաշինք պահող հովիւներին, պարտէզպաններին, դաշտերի պահապաններին ու գիւղական բանւորներին, այն ժամանակ բոլոր գիւղական աշխատանքներով պարապողների թիւը հասնում է ընդամենը 2 միլիօնի։ Այս ևս պէտք է ասել, որ մինչև այս տարվայ սկիզբները, Անգլիայի ագրարային օրէնքների համաձայն, հողատէրերից հողաբաժիններ կապալով վերցնելու և երկրագործութեամբ պարապելու պայմանները շատ անմատչելի էին, ուստի և ֆերմերութեան համար անհրաժեշտ մեծ կապիտալներ չունեցող հասարակ ժողովուրդը երկրագործութեամբ պարապելու մասին խսկի չէր էլ մտածում։ Բայց ահա 1907 թւականին հրատարակվեց մի նոր ագրարային օրէնք, որով հողաբաժիններ վերցնելու պայմանները առաջվայ համեմատութեամբ բաւականին հեշտանում և մատչելի են դառնում։ Այդ նոր օրէնքը գործութեան մէջ մտաւ այս տարվայ յունվարի մէկից։

Հէնց որ այդ նոր օրէնքը հրատարակվեց, իսկոյն մի նոր կօօպերատիւ ընկերութիւն կազմակերպվեց «Cooperative Small Holdings Society» (փոքրիկ հողաբաժիններ կապալով վերցնող կօօպերատիվ ընկերութիւն) անունով, որը իր ագենտներին սկսեց ուղարկել զանազան կողմեր, որպէսզի սրանք բացատրեն գիւղական ազգաբնակութեանը նոր օրէնքի իմաստը, պարզեն նրա մութ կողմերը, հասկացնեն, թէ ինչպէս կարելի է նրանով օգտվել ու կօօպերացիաներ կազմելով հողաբաժիններ վերցնել մշակութեան համար։

Այդ երկրի մեծ բաղդաւորութիւններից մէկն էլ այն է, որ, ինչպէս և նկատում է «Русск. Вѣд.»-ի թղթակիցը, այնտեղ կենտրօնական կառավարութիւնը երբէք և ոչ մի կերպ չէ արգելում քաղաքացիներին գնալ ժողովրդի մէջ և նրան բացատրել այս ու այն օրէնքի մութ և անհասկանալի կողմերը և սովորեցնել նրան ամենայն ընդարձակութեամբ օգտվելու եղած օրէնքներից։ Ճիշտ այդ հանգամանքի շնորհով վերոյիշեալ կօօպերացիայի ագենտները գնում են գիւղերը, միտինգներ են կազմում, բացատրութիւններ են տալիս և սովորեցնում են ժողովրդին, թէ ինչպէս և ում պէտք է դիմել հողաբաժիններ ստանալու համար։ Եւ որովհետև թէկուզ նոր օրէնքով էլ հողաբաժիններ վերցնելու պայմանները դրամական տեսակէտից դեռ ևս շատ հեռու են մասնաւոր անձանց համար (մեր խօսքը, ի հարկէ, գիւղացիների կամ ոչ-կապիտալիստների մասին է) մատչելի լինելուց, ուստի մեծ արագութեամբ կօօպերացիաներ են կազմվում նոյն «Coop. S. H. S.» ընկերութեան ագենտների ցուցմունքներով և խնդիրներ են տրվում ուր հարկն է, հողաբաժիններ ստանալու համար։

«Չորս և կէս ամսվայ ընթացքում,—ասում է «Русск. Вѣд.» թերթի թղթակիցը,—այնչափ խնդիրներ են ներկայացվել, որ եթէ վերցվելիք հողաբաժինները միմեանց մօտ դրվեն, մի այնպիսի մեծ հողաբաժին կը ստացվի, որի լայնութիւնը կը լինի 2 վերստ, իսկ երկարութիւնը—Սկօվդիայի սահմաններից մինչև Լամանշի նեղուցը, այսինքն՝ 650 վերստ»։ Բ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹԻՒՐՔԻԱ

Բաղդադի երկաթուղու շինութեան առիթով.—«Kölnische Zeit.» լրագրի ասելով Բաղդադի երկաթուղու նոր ճիւղերը, որոնց շինութեան ծրագիրը արդէն հաստատված է Բ. Դրան կողմից, այնքան առևտրական նշանակութիւն չունեն, որքան՝ ռազմական։

Հալեպը, Հիջասը, Ալեքսը, Դրեշտը և այլ քաղաքներ պարսկա-թիւրքական և ռուս-թիւրքական սահմանների հետ միանալուց յետոյ, Թիւրքիան հնարաւորութիւն կը ստանայ արագութեամբ փոխադրել իր զօրքերը այդ սահմանները։

Անգլիական լրագիրները այդ բաղդադեան երկաթուղին շարունակելու հետ են շաղկապում Թիւրքիայի զինուորական կեանքին լաւատեղեակ գեներալ Գօլցի մօտ ժամանակներս Պօլիս գնալը։

Թէև ինքը Գօլցը ժխտում է իր գնալու քաղաքական նշանակութիւնը, բայց «Times»-ը խոր կերպով համոզված է, որ գերմանացի գեներալի Պօլսում լինելը բաւականաչափ կերպով նպաստել է Թիւրքիայի առևտրական շահերի մերձեցման զուտ ռազմական նպատակների հետ Բաղդադի երկաթուղին շարունակելու հարցը քննելու ժամանակ։

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Կռիւ կղերականութեան դէմ համալսարաններում.—«Frankt. Zeit.» լրագիրը հաղորդում է, որ Վիէննայում տեղի է ունեցել մայրաքաղաքի բոլոր բարձրագոյն դպրոցների ուսանողների ժողով, 9000 հոգու մասնակցութեամբ, որտեղ վճռված է, ի նկատի առնելով կղերականութեան սկսած պայքարը համալսարանների ու գիտութեան ազատութեան դէմ, կազմակերպել մի կօմիտէտ մայրաքաղաքի բոլոր բարձրագոյն դպրոցների ներկայացուցիչներից, առանց ազգութեան և կրօնի խտրութեան, կղերականների և հակասեմիտականների դէմ կռիւ մղելու նպատակով։ Աւստրիայի բոլոր պրօգրեսիվ մամուլը ողջունում է Վիէննայի ուսանողութեանը այդ համակրելի ձեռնարկութեան համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌԱԳՐ. ԳՈՐԾԱԿԱԼ.

29 մայիսի

Ներքին

ՎԻՆԴԱՎԱ։ «Մօսկվա» շոգենաւով եկան նաւագնացութեան կօնգրէսի անդամներից 80 հոգի և մանրամասն դիտեցին նաւահանգիստը։

ԼԻԲԱՎԱ։ Եկան նաւագնացութեան կօնգրէսի պատգամաւորները։

ՊԵԱՏԻԳՈՐՍԿ։ Հանքային ջրերի վերատեսուչ Տիլիչեվը հեռագրում է, որ Տէրէքի շրջանում, յունվարի 1-ից մինչև մայիսի 15-ը եղել է բծաւոր տիֆով հիւանդանալու 234 դէպք։ Բոլոր հանքային ջրերում յունվարի 1-ից մինչև մայիսի 26-ը տեղի են ունեցել 94 հիւանդութիւններ։ Հիւանդանում են գլխաւորապէս եկւոր բանւորները։ Ամեն միջոց ձեռք է առնված եկող հասարակութեանը հիւանդութիւններից զերծ պահելու։

ՄՕՍԿՎԱ։ Եկան միջազգային նաւագնացութեան կօնգրէսի պատուիրակները, թւով 200 օտարազգի։

Արտաքին

ՊԱՐԻԶ։ «Թանը» ռեվէլեան այցելութեան առիթով ասում է, որ հիմք չը կայ երկու միապետների տեսակցութեան նշանակութիւնը վերագնահատելու համար։ Անգլօ-ռուսական բարեկամութիւնը իր մէջ պատերազմի ոչ մի ռիսկ չէ պարունակում։

«Ժուրնալ դէ Դէբան» միանում է մամուլի այն օրգաններին, որոնք այն կարծիքն յայտնեցին, թէ տեսակցութիւնը կարևոր քաղաքական նշանակութիւն ունի, որը սակայն զուրկ է որևէ ագրեսիվ բնաւորութիւնից։

ԼՕՆԴՕՆ։ «Մօրնինգ Պօստը» ասում է, որ տեսակցութիւնը հանդիսանում է երկու միապետների բարեացակամութեան արտայայտութիւն։

«Դէյլի Տելեգրաֆը» ասում է, որ երկու միապետների ճառերը գործունեայ հասարակ լեզուով տալիս են անգլօ-ռուսական համաձայնութեան նպատակը և իսկական պատկերը։ Օգոստոսեան համաձայնութիւնը երկու ազգերը միացրեց փոխադարձ բարեացակամութեան և վստահութեան ոգով։ Այդ ոգին երկու ազգերն էլ վճռեցին պաշտպանել բոլոր միջազգային հարցերը բարեկամօրէն լուծելու և հանուր խաղաղութիւնը պահելու նպատակով։

Նոյն միտքն է յայտնում և «Դէյլի Քրօնիկլը»։

«Թայմսը» ասում է, որ Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ոչ հասարակական միտքը, ոչ պետական գործիչները հնարաւոր չեն գտնում գոյութիւն ունեցող համաձայնութեանը աւելի ձևական և դրական բնաւորութիւն տալ։

ԲԵՐԼԻՆ։ «Նորդ-դէօյչէ-Ալգեմ. Ցայտունգը» գրում է. «Ամենից առաջ երկու միապետները իրանց կենացների մէջ, իբրև ընդհանուր նպատակի վրա, մատնանշեցին միջազգային խաղաղութիւնը պահելը։ Երկու միապետների ճառերի հանգիստ և անկեղծ տոնը համապատասխան է այն տրամադրութեան, որ երևան է հանում անգլիական և ռուսական մամուլի լուրջ մասը, իբրև ներհակ այն միանգամայն անհիմն ձըգտումներին, որոնցով ջանում են Րեվէլի տեսակցութեանը Գերմանիայի թշնամական նշանակութիւն տալ»։

ՊԵԿԻՆ։ Ներկայումս ճապօնական և չինական կառավարութիւնները զբաղված են 1907 թ. աշնանը հրատարակված այն ժամանակաւոր կանօնների վերաքննութեամբ, որոնք վերաբերում են ճապօնական պօստը չինական երկաթուղագծով տեղափոխելու խնդրին։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԲՈՒԺՕՂՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԿԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ., վիրաբուժութեան և միզասեռ.
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց ծաղկահատ.։
Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.։
ԿԻՆ-ԲԺԻՇԿ Ա. Ի. ՇՉԵՐԲԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան։
Գ. Ե. ԳՈՒՐԳԵՆՕՎ—12—12½ ժ. կանանց և մանկաբարձութեան։

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Ե. ԳՐԻԳՈՐԵԱՆ—6—7 ժ. վիրաբուժ., վեներական, միզասեռ և մորթու հ.
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի ս. Աստուածածին «Թանդոյեան» եկեղեցու ծխականները հրաւիրվում են ընդհանուր ժողովի, կիրակի, յունիսի 1-ին, ժամը 12-ին եկեղեցում, քննելու՝

1) Նոյն եկեղեցու միաբանների բողոքը նախկին երէցփոխի դէմ։

2) Նոյն եկեղեցու դպրոցի երեք ուսուցիչների բողոքը հոգաբարձութեան դէմ։

3) Նոյն եկեղեցու դպիրների բողոքը Տէր-Մարգարեանցի դէմ։

Այս ժողովը երրորդն է և վերջինը. խընդրեմ շնորհ բերել իր ժամանակին։

Ներսէս ա. ք. Ղամազեանց
1—1

ՀՐԱՒԷՐ

Լրացած լինելով Էջմիածնեցոց եկեղեցու ծխական օրիորդաց դպրոցի պ.պ. հոգաբարձուների պաշտօնավարութեան ժամանակամիջոցը՝ կիրակի, յունիսի 1-ին, առաւօտեան 10 ժամին, նոյն եկեղեցում լինելու է ծխականների ընդհանուր առաջին ժողով 2—4 հոգաբարձուներ ընտրելու յիշեալ դպրոցի համար, որի մասին յայտնելով 21 տարին լրացած նոյն եկեղեցու բոլոր ծխականներին՝ խնդրում եմ ներկայ լինել ժողովին՝ ընտրութեանը մասնակցելու։

Բ. մասի գործակալ՝
Ղևոնդ քահ. Մամիկոնեանց
(հ. կ.) 2—1

«ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻ»
խմբագրութիւնը

խնդրում է իր այն բաժանորդներին, որոնք փոխել են և կամ ամառվայ ընթացքում ժամանակաւորապէս փոխելու են իրանց հասցէն, բարեհաճեն այդ մասին տեղեկացնել, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ շուտով բ. գիրքը և այնուհետև միւս գրքերը անկորուստ տեղ հասցնել։

Բաժանորդագրութիւնը
շարունակվում է

Տարեկան (մարտից—մարտ) 10 գրքի համար 10 ր.։ Հատավաճառ 2 ր.։ Դիմել գրավաճառանոցները։ Խմբագրութեան դիմողները ճանապարհածախս չեն վճարում։ Тифлисъ, Редакція „Гехарвестъ“.

Նոր հիւրանոց Վարշավայում
„ՀԻՒՐԱՆՈՑ ՊԱՍՍԱԺ“

որ գտնվում է Վարշավայի առևտրական կենտրօնում, Բելեանսկայա, Դօլգայա եւ Նալևկի փողոցների անկիւնում, «Զիմօնսի Պասսաժի» շինութեան մէջ, էլեկտրական տրամվայների կանգ առնելու տեղը, պարունակում է 100 նոր սարքված սենեակներ՝ արժողութեամբ 1 ր. 25 կ.-ից օրական, էլեկտրական լուսաւորութեամբ և կենտրօնից տաքացնելով։

Լողարաններ, էլեկտրական բարձրացնելու մեքենայ թէ մարդկանց և թէ ապրանքների համար, ապրանք դարսելու հնարաւորութիւն, քաղաքային տելէֆօններ և միացում Լօձի և Կալիշի հետ, կառքեր հիւրանոցից դէպի ամեն գընացքներ։

Բացվում է յունիսի 7/20-ից։
(շ.) 5—1

Լոյս տեսաւ
„ՀԱՍԿԵՐ“
№ 5, մայիս, 1908 թ.
Բովանդակութիւն

1. «Թռչունի մտածմունքը» թարգմ. Յովհ. Թումանեանի.—2. «Մայրը». Յովհ. Թումանեանի.—3. «Հնարագէտ նպաստակը». Ս. Լ.—4. «Տէրն ու ծառան» հէքիաթ Յովհ. Թումանեանի.—5. «Ռետինէ գնդակ» (վերջ) պատմուածք Սաղալեանի.—6. «Տիկինների դերձակուհին» (վերջ) պատմուածք Ալտաեվի, թարգմ. Իսկ. Յակոբեանի.—7. Լէօ.—8. «Բանաստեղծի շկօլը», իմ յիշողութիւններից, Լէօ.—9. «Զուարճալիք Մարիամ տատիկի տոպրակից.

——

Համարի հետ ՁՐԻ ուղարկվում է միայն գաւառացի բաժանորդներին «Մարկաների դոմինօ» խաղը։

——

Մանկավարժական գրադարան
XIV—XV Պրօֆ. Ի. Ա. Սիկորսկի—«Մանկան հոգին», թարգմ. Մխ. Աս. և Ստ. Լիս. 65—96։
1—1

ԵՐԿԱԹՈՒՂԻ

Գնացքների ամառնային երթևեկութիւն

(Ժամերը հաշւած են Պետերբուրգի ժամանակով, իսկ փակագծերի միջինը՝ Թիֆլիսի ժամանակով)

	ԱՐԱԳ	ԱՐԱԳԱՑՎԱԾ	ՊՈՍՏԱՏԱՐ	ՄԱՐԴԱՏԱՐ	ԱՊՐ.-ՄԱՐԴԱՏ.
Բագուից դուրս գալը . .	—	4 ժ. 10 ր. ցեր.	11 ժ. 8 ր. առ.	5 ժ. 24 ր. առ.	—
Թիֆլիս հասնելը	—	8 ժ. 30 ր. առ.	5 ժ. 59 ր. առ.	10 ժ. 52 ր. երեկ.	—
Թիֆլիսից դուրս գալը .	(9 ժ. 3 ր. երեկ.)	—	(7 ժ. 47 ր. առ.)	(12 ժ. 28 ր. գիշ.)	—
Բաթում հասնելը	7 ժ. 14 ր. առ.	—	8 ժ. 40 ր. երեկ.	12 ժ. 36 ր. ցեր.	—
Բաթումից դուրս գալը.	11 ժ. երեկ.	—	7 ժ. 1 ր. առ.	5 ժ. 57 ր. երեկ.	—
Թիֆլիս հասնելը. . . .	9 ժ. 44 ր. առ.	—	8 ժ. 38 ր. երեկ.	7 ժ. 22 ր. առ.	—
Թիֆլիսից դուրս գալը.	—	(11 ժ. 21 ր. գիշ.)	(10 ժ. 36. ր. երեկ)	(8 ժ. 58 ր. առ.)	—
Բագու հասնելը. . .	—	1 ժ. 35 ր. ցեր.	4 ժ. 45 ր. ցեր.	12 ժ. 57 ր. գիշ.	—
Ջուլֆայից դուրս գալը.	—	—	5 ժ. առ.	—	—
Երևանից դուրս գալը .	—	—	—	—	9 ժ. 27 ր. երեկ.
Ալէքսանդրոպոլից դուրս գալը.	—	—	7 ժ. 59 ր. երեկ.	—	5 ժ. 30 ր. առ.
Թիֆլիս հասնելը. . . .	—	—	5 ժ. 28 ր. առ.	—	3 ժ. 30 ր. ցեր.
Թիֆլիսից դուրս գալը .	—	—	(12 ժ. 53 ր. գիշ.)	—	(11 ժ. 48 ր. առ.)
Ալէքսանդրոպոլ հասնելը.	—	—	10 ժ. 21 ր. առ.	—	9 ժ. 53 ր. երեկ.
Ջուլֆա հասնելը. . . .	—	—	11 ժ. 47 ր. գիշ.	—	—
Ալէքսանդրոպոլից դուրս գալը.	—	—	10 ժ. 50 ր. առ.	—	10 ժ. 15 ր. երեկ.
Կարս հասնելը.	—	—	2 ժ. 9 ր. ցեր.	—	1 ժ. 49 ր. գիշ.

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳ-ԲԷԳԵԱՆ
ԱՉՔԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Ընդունելութիւնն ամեն օր
Առաւօտեան ժամի 9-ից մինչև 12
Երեկոյեան » 5-ից մինչև 7
Վելեամինօվսկայա փողոց № 8.
(ե. հ. շ.) 100—72

ԲԺՇԿԱՊԵՏ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
վերսկսեց ընդունելութիւն
Ներքին եւ Ջղային
Հիւանդների
Պեատիգորսկում, Վերևի բուլվար № 14. տ. իշխ. Գիրէի, Пятигорскъ, Верхній бульваръ, д. кн. Гирей. 30—9

ԱԼՄԵՋԱ

Ալմեջա ունիմ
Ալմեջա չունիմ
[illegible] № 3475

Կովկասի և Անդրկասպեան երկրի միակ ներկայացուցիչը Ի. Ա. Ախօբաձէն է։
Գլխաւոր պահեստ և գրասենեակ
«Ալմեջա»-ի
Тифлисъ, Пушкинская ул. № 15.

ԱՏԱՄԻ ՑԱՒԸ
ՇՈՒՏ հանգստացնելու
եւ ատամն ու լնդերը ամրացնելու
ԼԱՒԱԳՈՅՆ ՄԻՋՈՑՆ Է
ԱԼՄԵՋԱ
ՇԱՏ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ
ցուցահանդէսներում նուէրների է արժանացել
ԱՂՔԱՏՆԵՐԻՆ ՁՐԻ
ԲԺՇԿՈՒԹԻՒՆ
Այդպիսիներին խնդրում ենք դիմել Ախօբաձէի գրասենեակը,
Пушкинская, 15.

Օտարաքաղաքացիներից կանխավճար ստանալով ուղարկում ենք վերադիր վճարով։

Դեղատներին զեղջ

Փոքրեակ. սրուակը 40 կ. ⁝✦⁝✦⁝ Իսկական սրուակը 1 ր. 20 կ.
Գրաս. և պահեստի բաժանմ. Баку, Старо-Полицейская, № 14. Հեռագրերի հասցէ. Тифлисъ, Ахобадзе.
(հ. շ.) 15—6

ՍԱՆԱՏՕԳԷՆ ԲԱՈՒԷՐ

Ամրացնում է օրգանիզմը, բարձրացնում է աշխատելու ընդունակութիւնը, վերադարձնում է ախորժակը, կենսուրախութիւնը և լաւ տրամադրութիւնը։

Իսկական սանատօգէնը միմիայն Բաուէր և ընկ. ֆիրմայինն է, որի օգտակար ազդեցութեան մասին 7500-ից աւելի բժիշկներ զանազան երկիրների հրաշալի կարծիքներ են յայտնել։

Զգուշացեք ոչինչ չարժեցող կեղծիքներից!

Բրօշիւրները ուղարկվում են ձրի հէնց առաջին պահանջին։ Բաուէր և ընկ. ֆիրմայի Մօսկվայի բաժանմունք, Мясницкая ул., № 31. Գլխաւոր ներկայացուցչութիւն՝ С.Петербургъ, Б. Конюшенная 29.

(մ. 17, 31, յ. 21, յուլ. 5, 19, օգ. 2, 16) 7—2

ՎԵՐՋԻՆ ՆՈՐՈՒԹԻՒՆ!



Տղամարդկանց գրպանի ժամացոյց, բաց (չոսկեջրած), իսկական ամերիկական «Սօլօ» ոսկուց, գեղեցիկ փորագրով։ 56 պրօբի ոսկուց մասնագէտն էլ չի տարբերի։

Այդ ժամացոյցը ամենալաւ յօրինուածք է «anker» (և ոչ ցիլինդր), քոքվում է 36 ժամը 1 անգամ, և շատ ուղիղ է բանում։

Երաշխաւորութիւն 6 տարով։ Գինը փոխանակ 12 րուբլու 3 ր. 25 կ., երկու հատը 6 րուբլի. նոյն տեսակի կանացի, հատը 4 րուբլի։ Ժամացոյցի հետ ձրիաբար ուղարկվում է՝ 1) նոյն մետաղից պանցիրէ շղթայ, 2) բրելօկ-հեռադիտակ գեղեցիկ և հետաքրքիր տեսարաններով, 3) կաշուէ քսակ ժամացոյցը փչանալուց պահպանելու համար։ Հասցէն՝ Генеральное представительство часовъ „Соло“ Т-во „Аполло“, Варшава М. 1-е почтовое отдѣленіе.

Ծրարելու և ուղարկելու համար մէկ կամ չորս ժամացոյցի համար պահանջվում է 50 կ., Սիբիր ուղարկելու համար 75 կոպէկ։ Սիբիր առանց կանխավճարի չէ ուղարկվում։ Ուղարկում ենք վերադիր վճարով։

Թղթակցութիւնները ռուսերէն և գերմաներէն լեզուներով։

(14, 23, 31) 3—3

ԹԻՖԼԻՍԻ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ցանկանալով ամառվայ ամիսներում բանալ իր արհեստանոցի ճիւղը

ԳԻՒՂԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻՑ ՄԷԿՈՒՄ

դիմում է հասարակութեանը, խնդրելով դրամական աջակցութիւն այդ դիտաւորութիւնը իրագործելու համար։

Նպաստները հասցնել տնայնագործական ընկերութեան վարչութեան կամ «Մշակի» խմբագրութեան։

Типог[illegible]ія „Экономія“ Авзка Мугдусіанспоса С-съми, Большая Ванкская ул. № 3.